


Ֆ. Ն. ՍԱՄՈՅԼՈՎ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԱՐԻԶՄԻ
ԺԱՄԱՆԱԿ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937




Փ. Ն. ՍԱՄՈՅԼՈՎ

9(47) 175

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԱՐԻՉՄԻ
ԺԱՄԱՆԱԿ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՆ ԵՐԵՎԱՆ 1 9 3 7

Բրոշյուրում ցույց է տրվում ցարական Ռուսաստանի բան-
վորների ու աշխատավորների իրավագրկությունը: Բրոշյուրում
պատկերվում են Պետական Դումայի ընտրությունները, բացա-
հայտվում են ցարական կառավարության ու բուրժուազիայի
կեղծիքն ու ցինիզմը, այն կառավարության ու բուրժուազիայի,
վարունք փորձում էլին խառնածին «ազատություններով» հետ պա-
հել մասսաների՝ բուլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ
կատարվող հեղափոխական հարձակումը:

Բրոշյուրում բերված են հեղինակի՝ ընկեր Սամոյլովի անձ-
նական հուշերը Իվանովո-Վոզնեսենկոյում և նախկին վլադիմիր-
բյան նահանգում բանվորների կողմից յերբորդ և չորբորդ Դու-
մայի պատգամավորներ ընտրելու մասին:

A $\frac{11}{9938}$

ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

1905 թ. հունվարի 9-ին Պետերբուրգի փողոցներում լավեցին կրակոցներ: Ռուսական ցարը գնդակահարում եր խաղաղ ու անդեն բանվորներին: Հունվարի 9-ի որը («Արյունոտ կերակի») միայն սպանվածները թիվը կազմում եր հազար մարդուց ալեի: Բանվորները յեկեկ էյին Դվորցովայա հրապարակը, վորպեսզի ցարին հանձնեն իրենց պետիցլան (խնդրազիրը): Նրանք գըրում էյին ցարին. «Մենք, Պետերբուրգի բնակիչ բանվորներս յեկեկ ենք Քեզ մոտ: Մենք դժբախտ, անարգված ստրուկներ ենք, մենք տրոլված ենք բռնակալությամբ ու կամայականությամբ: Յերբ համբերության բաժակը լցվեց, մենք աշխատանքը դադարեցրինք և խնդրում էյինք մեր ձեռնարկատերերին տալ մեզ միայն այն, առանց վորի կյանքը հանդիսանում ե տանջանք: Բայց այս բոլորը մերժվեց, գործարանատերերին ամեն ինչ ապրիլի թվաց: Մենք այտուկ, բաղմաթիվ հազարներս, ինչպես և ամբողջ ուսս ժողովուրդը, մարդկային վոչ մի իրավունք չունենք: Քո չինովնիկները պատճառով մենք դարձել ենք ստրուկներ»: 1905 թ. հունվարի 9-ը հսկայական ժողովրդական մաստուներին արթնացրեց զիտակից քաղաքական կյանքի, հեղափոխական պայքարի: «Հարյուրավոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատներ «հանկարծ» աճելով դարձան հազարներ, հազարները դարձան յերկուսից մինչև յերեք միլիոն պրոլետարներ ի առաջնորդներ: Պրոլետարական պայքարը մեծ խմբում առաջ բերեց, մասամբ նաև հեղափոխական շարժում, հիսուն-հարյուր միլիոնանոց գյուղացիական մասսայի խորքերում, գյուղացիական

չարժուամն արձագանք դատալ բանակում և առաջ բերեց զինչորնների ապստամբություններ...» (Աենին) :

Ռուսաստանն սկսեց այրվել հեղափոխության կրակով : Պրոլետարիատը դնում էր առջևից : Բաղմամբիվ տասնյակ հազար բանվորներ փողոց էլին դուրս գալիս «կորչի՛ ինքնակալությունը» լողունդով : Սկսվեց մասսայական, Ռուսաստանում չըտեսնված գործադուլային շրջանը : «Գործադուլայիոր» բառն էլ ալիլի մտաիկ բառ դարձավ բաղմամբիլիոն ժողովրդական մասսաների համար : Սա իրենց : Հարազատ բանվոր մարդն էր : Գլխուղարիված «գործադուլայիոր» հաձախ դյուղացիական մասսաների առաջնորդն էր դառնում, փորովհետև անցնելով դասակարգային դաժան պայքարի գլուխը, նա հասել էր ցարիզմի, կալչածատերերի, բուրժուազիայի դեմ անխնա պայքար մղելու անհրաժեշտության ըմբռնմանը :

Գաղաքի պրոլետարական մասսայական գործադուլի միացումը դյուղացիական շարժման հետ դյուղում՝ տատանեց ցարիզմի հավատարիմ հենարանը — բանակը : Սկսվեց նավատորմի և բանակի ռազմական ապստամբությունների շրջանը : Խոտլարար «Պոտյոմկին» զրահանավը բարձրացրեց հեղափոխության դրոշը : Զորամասերում տեղի էլին ունենում խմորումներ, անհնազանդության բռնկումներ և հրամանատարական կազմին յենթարկելուց հրաժարվելու դեպքեր : Վրա յեր հատնում հեղափոխական փոթորիկը :

Այս պարազաններում ցարական կառավարությունն առաջին փորձն է անում փորոշ զիջումների միջոցով կատեցնել հեղափոխական շարժումը : Ծուտով «Արյունոտ կիրակիից» հետո, 1905 թվի փետրվարի 18-ին ներքին գործերի մինիստր Բուլիղինի անունով «բարձրադուլն հրովարտակ» է արվում, առաջարկելով ներդրավել «բնակչությունից ընտրված մարդկանց որենսդրական առաջարկությունների նախնական մշակմանն ու քննությանը մասնակցելու համար» :

Այսպես կոչված բուլիղինյան Դումայի միջոցով ինքնակալությունը փորձում էր փակել բարձրացող հեղափոխական ալիքի ձանապարհը :

ՅԱՐԻ ՎՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ

1905 թ. ոգոստոսի 6-ին հրապարակվեց ցարի մանիֆեստը «որինախորհրդակցական» դուժա հիմնելու մասին: Բուլղղինյան Դումայի պատգամավորների ընտրութունը պետք է կատարելին ընտրողներին նահանգական ընտրական ժողովները: Պատգամավորներին ընտրում էլին հետևյալ չորս կուրիաները (ընտրախումբները): առնվազն 100 գետյառին հող ունեցող հողատերերը, վոչ պակաս, քան 1.500 ու. դույբի տեր քաղաքացիները, վոլոստների և ստանիցաների լրացորները: Այսպիսով բուլղղինյան Դուման պետք է բաղկացած լիներ կալվածատերերից, բուրժուազիայից և ունևւոր դյուղացիների մի վոքը մասից: Բանվորներն ու դյուղացիները (բացառությամբ կուրյակների) բոլորովին զրբկված էլին ընտրական իրավունքից: Նրանք մնում էլին ցարի լրակատար իրավազուրկ «հպատակներ», նրանք լիովին մնում էլին ցարական չիտովնիկների, վոստրիկանների ու ժանդարմների իշխանության տակ:

Կառավարությունն ունևւոր դասակարգերին վոլորմություն նետեց՝ փորձելով դրանով միացնել բոլոր հակահեղափոխական ուժերը հեղափոխությունը ճնշելու համար: Բուրժուազիան ի դեմս ազադա կադետական կուսակցության («Ազատագրման միության») ընդառաջ դնաց ցարիզմին, վոլորվհետև նա առում էր և վախենում ժողովրդական հեղափոխությունից: Ի՞նչ աբաժ, վոլ այդ Դուման «որինախորհրդակցական» էր և վոչ մի որենք հրատարակել չեր կարող: Բուրժուազիան բավարարված այդ վոլորմությամբ՝ ձգտում էր ցարիզմի հետ միասին կանգնեցնել և ճզմել բանվորական ու դյուղացիական շարժման հզոր վերելքը:

Բուլղղինյան Դումայի կանոնադրությունը մի սոոր խարբյություն էր: Մինչդեռ մենչեիկները, բանվոր դասակարգի այդ վաղուցվա դավաճանները, վճռականորեն հանդես յեկան Դումայի ընտրություններին մասնակցելու ոգտին. նրանք ուզում էլին ողնել բուրժուազիային իշխանության հասնելու: Իսկ բոլ-

շելիները վճռապես մերժում եյին բուլղիւնյան Դումային վորեյե մասնակցութիւնն ցույց տալը :

Հեղափոխութիւնը վեր եր բարձրանում : Հին իշխանութիւնը կենդանի յեր և բուլղիւնյան վողորմությամբ ուղղում եր վրկվել անխուսափելի կործանումից : Հեղափոխության շահերը պահանջում եյին վիժեցնել բուլղիւնյան Դուման և դա վիժեցվեց 1905 թ. ընդհանուր դործադուլի և Դումայի ակտիվ բոյկոտի միջոցով, վոր անց կացվեց բուլղիւնի ղեկավարությամբ :

Բուլղիւնյան Դումայի բոյկոտի լողունդն այն ժամանակվա համար բուլղիւնյան կուսակցության ճիշտ հեղափոխական լողունդն եր : Հարկավոր եր նախ տապալել միապետութիւնը և ապա հեղափոխականորեն լուծել պարլամենտի ընտրության հարցը :

ՅԱՐԱԿԱՆ ՊՈԶԱՏ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1905 թ. հոկտեմբերի 17-ին ցարը՝ վախեցած բանվորների հեղափոխական յելույթներից՝ մի մանիֆեստ հրատարակեց, վորը հետևյալ գրույթներն եր պարունակում. «1. Ազգարնակությանը չնորհել քաղաքացիական ադատութիւնների անստան հիմունքներն անձի իսկական անձեռնմխելության, խղճի, խոսքի, ժողովների ու միութիւնների ադատության հիմունքներով : 2. Չդադարեցնելով Պետական Դումայի նախասահմանված ընտրութիւնները՝ հենց այժմ Դումային մասնակից դարձնել, վորչափ այդ հնարավոր ե, նկատի առնելով մինչև Դումայի դումարումը մնացած կարճ ժամանակամիջոցը, ազգարնակության այն դասակարգերին, վորոնք այժմ բոլորովին զրկված են ընտրական իրաւունքներից, ընդ մին ընդհանուր ընտրական իրաւունքի ըսկրպրունքների հետագա զարգացումը թողնելով նոր սահմանված որևնողրական կարգին» և 3. սահմանել, «վորպես անստան կանոն, վորպեսզի վոչ մի որևնք չկարողանա ուժ ստանալ, առանց Պետական Դումայի հավանության, և վորպեսզի ժողովրդի ընտրչայններին հնարավորութիւնն ապահովված լինի իրոք վերա-

հլուսելու ցարի գրած իշխանությունների գործողությունները որինաչափությանը»: Մանիֆեստը ցարին ստորագրելու յեր տվել ինքնակալությունը հեղափոխությունից խակապես պաշտպանող կոմս Վլատեն: Այդ միապետության մի նոր տրյուկն եր, ժողովըրդին խարելու մի նոր ձևը:

Արդեն յերկու որ հետո ամբողջ Ռուսաստանում սկսվեցին հրեական ջարդերը: Յարական կառավարությունն ատելություն հրահրելով ընդդեմ հրեա-աշխատավորների, դրանով իսկ վտրձում եր ժողովրդական մասսաների ուշադրությունը չեղել հեղափոխությունից: Ջարդերը կազմակերպում եյին պահնորդարանը, վոստրիկանությունը— «որինական» իշխանությունը: Բայց ջարդերը չեյին կարող կանգնեցնել և չկանգնեցրին հեղափոխական շարժման վերելքը:

Պայքարը ծավալվում եր ամբողջ Ռուսաստանում, բայց հեղափոխական շարժման հիմնական կենտրոններն եյին Պետերբուրգը և Մոսկվան:

1905 թ. հոկտեմբերի 17-ին հեղափոխությունը հաղթանակ ձեռք բերեց, բայց այդ լիակատար հաղթանակ չեր: Լենինը գրում եր. «Մենք լիակատար իրավունք ունենք հաղթանակ տանելու: Յարի գիջումն իրոք վոր հեղափոխության մեծադույն հաղթանակն ե, բայց այդ հաղթանակը դեռ ամենեվին չի լուծում ամբողջ ազատության գործի բախտը: Յարը դեռ ամենեվին ել անձնատուր չի յեղել: Ինքնակալությունը դեռ բնավ չի դադարել գոյություն ունենալուց»: Ինքնակալությունը ջախջախված չեր: Նա իր ուժերն եր հավաքում նորից ժողովրդի վրա գրոհելու, նորից նրան խարելու համար: Պետք եր հեղափոխությունը հասցնել խակական և լիակատար հաղթանակի: Այս եր հեղափոխության լողունը:

Ստեղծվում են բանվորական պատգամավորների խորհուրդները — մասսաների հեղափոխական ապստամբության օրդանները: Լենինը գինյված ապստամբության կոչ ե անում: «Ջոկատները պետք ե իրենք գինվեն, ով ինչով կարող ե (հրացան, ատրըճանակ, ռումբ, դանակ, կաստետ, փայտ, նավթոտ լաթի

կտոր կրակ տալու համար, պարան կամ պարանե սանդուխք, բարրիկաղներ շինելու համար բահ, պիրոքսիլինի (հրաբամբակ) դրան, փշալար, մեխեր...): Յերբեք չպետք է սպասենք կողմնակի, վերելից, դրսից յեկող ուղեւթյան, այլ ամեն բան պետք է ինքներս ձեռք բերենք»: Իսկ մենչեւիկներն ուրախութեամբ դիմավորեցին ցարական մանիֆեստը, վորը, նրանց կարծիքով, բաց արեց Ռուսաստանի բուրժուական-սահմանադրական իրակարգի ժամանակաշրջանը:

ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՈՒ ԲՈՒՐԺՈՒԱՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՈՐԵՆՔԸ

1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո լիբերալ բուրժուազիան բացահայտորեն դավաճանեց հեղափոխական շարժմանը, դործարք կնքեց ինքնակալութեան հետ: Բանյոյրներն ու գյուղացիները շարունակեցին բուլչեւիկյան կուսակցութեան դեհավարութեամբ սլաքար մղել վոչ միայն ցարական կառավարութեան դեմ, այլև լիբերալ բուրժուազիայի դեմ:

Յերբ 1905 թ. դեկտեմբերին հեղափոխական շարժումը հասավ իր դադարժնակետին և վերածվեց Մոսկվայի բանյոյրների դինված ապստամբութեան, ցարական կառավարութեանը հեղափոխական շարժման սպառնալից աճումից ազդված՝ հրապարակեց Պետական Դումայի ընտրութեաններին նոր կանոնադրութեան (1905 թ. դեկտեմբերի 11-ին):

Ըստ այս ընտրական որենքի բուլիդինյան Դումայի առաջները սահմանված կուրիաներին՝ հողատիրական, յերկու քաղաքային (առաջինը քաղաքային խոչոր բուրժուազիայի և յերկրորդը միջին և մանր բուրժուազիայի համար) և գյուղացիական էութիաներին ավելացրին բանյոյրական կուրիան, ինչպես նաև լայնացրին հողատիրական կուրիայի շրջանակը և մեծացրին քաղաքային յերկրորդ կուրիայի ընտրողների կազմը:

Ընտրութեաններին թույլատրվեց մասնակցել բնակչութեան մի քանի նոր խմբերի (մանր բուրժուազիան, անչարժ դուլքի

տերերը, առանձին բնակարան ունեցող և բնակարանային տուրք վճարող անձինք, պետական թոշակառուները, պետական ծառայութեան մեջ գտնվող ծառայողները) :

Յարական կառավարութեանն ամեն ինչ արավ բանվորական ներկայացուցչութեանը կրճատելու համար :

Բանվորական կուրիայի դժով ձայնի իրավունք ունեյին միայն այն ձեռնարկութեանների բանվորները, վորոնք ունեյին 50-ից մինչև 1000 տղամարդ բանվորներ (կանայք հաշվի չեյին առնվում) : Սրանք ընտրում էին մեկ լիազոր : Ավելի խոշոր ֆաբրիկաներն ու գործարաններն ընտրում էին մեկ լիազոր ամեն մի հազար մարդուց : Մնացած բոլոր բանվորները ձայնի իրավունքից զրկված էին :

Բանվորներից կատարվող ընտրութեանները յեռաստիճան էին : Բանվորներն ընտրում էին լիազորներ, լիազորները՝ ընտրողներ, իսկ ընտրողները հողատերերի և խոշոր սեփականատերերի հետ միասին ունեցած ընդհանուր համազումարներում՝ պատգամավորներ : Յարական կառավարութեանն ամեն ինչ անում էր, վորպեսզի թույլ չտա, վոր Դումա անցնեն «կրամոլներին» և խռովարարները, վորպիսին նա հաշվում էր բանվորներին : Բանվոր դասակարգը 1905 թ. ցույց տվեց, վոր նա խորը կերպով ասում է ցարական կարգերը և հաջողութեամբ պայքարում է այդ կարգերի դեմ :

Գյուղացիներն ընտրում էին 10 տնից մեկին վոլոստային ժողովին մասնակցելու : Վոլոստային ժողովներն ընտրում էին լիազորներ դավառային համազումարին մասնակցելու : Լիազորների դավառային համազումարն արդեն ընտրում էր ընտրողներ, իսկ այս վերջիններն էլ նահանգական ընտրողների ընդհանուր համազումարներում մասնակցում էին Պետական Դումայի անդամներ ընտրելուն : Այսպիսով գյուղացիներից կատարվող ընտրութեանները քառաստիճան էին :

Սիրելիւրում և Լեհաստանում (վորն այն ժամանակ մտնում էր ցարական կայսրութեան կազմի մեջ) թույլատրվում էր մասնակցել ընտրութեաններին միայն ունեւոր գյուղացիներին : Լեհաստ-

տասնում ընտրություններին մասնակից է թույլատրվում եւ սունը-
վազն 100 ղեսայատին հող ունեցողներին, իսկ Սիրիբում՝ 300
ղեսայատին ունեցողներին: 5 տարով ընտրվող այս Պետական
Դումայի անդամները թիվը 622 մարդուց ավելի չպետք է լի-
ներ:

Ըստ այս որենքի կալվածատերերն ունեյին 4·249 ընտրող,
Ռուսաստանի ամբողջ մնացած բնակչութունը՝ 2,962 ընտրող,
այսինքն համարյա մեկ ու կես անգամ պակաս: Կալվածատիրոջ
մեկ ձայնն այդ որենքով հավասար եւ բուրժուազիայի 3 ձայնի,
դյուզացիների 15 ձայնի և բանվորների 45 ձայնի: Ահա այս եր
«Հավատարիմ հպատակների իրավահավասարությունը», այս եր
ցարական սահմանադրությունը, այս եր դասակարգային «արդա-
բությունը»:

Յարական Ռուսաստանը ժողովուրդների բանա եր: Յարիզը
կիրառում եր ազգային ճնշման դադանային անպատկառ քաղա-
քականություն: Որինակ՝ բոլոր «Թափառական այլազգիները»,
ինչպես ասված եր որենքում, այսինքն այլ ազգություններին
պատկանող աշխատավորները, վորոնք նստակյաց կյանք չեյին
վարում, ընտրական իրավունքից զրկվում եյին: Պետական Դումա
կարող եյին ընտրվել միայն այն մարդիկ, վորոնք տիրապե-
տում եյին ուսաներեն լեզվին, իսկ այդ բոլոր ճնշված ազգու-
թյուններին պատկանող աշխատավորներին փաստորեն զրկում
եր Պետական Դումայում իրենց ներկայացուցիչներն ունենալու
;նարավորությունից:

ՅԱՐԻԶՄԸ ՃՆՇՈՒՄ Ե ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին Պետական Դումայի ընտրական կամպանիան տեղի
յեր ունենում այն մոմենտին, յերբ ցարական կառավարությունը
հրով ու արյունով եր ճնշում հեղափոխությունը: Յարական դե-
ներալների, այդ կախաղան հանողների պատժիչ արչավախմբերը
չըջում եյին յերկրում: Հազարավոր բանվորներ կախաղան հան-
վեցին, տասնյակ հազարներ տանջվում եյին ցարական բանտե-

րում: Ֆարսեկան կառավարութիւնը դաժան կերպով հայածում էր բանխորհական մամուլը, հեղափոխական կուսակցութիւնները քչում եր խորը ընդհատակ, կատաղաբար ճնշում եր գլուղացիների ապստամբութիւններն ընդդէմ կալվածատերերի: Բայց հեղափոխութիւնն ապրում եր, նա տանում եր ինքնակալության դաժան հարվածները և բոլշևիկների ղեկավարությամբ ուժեր եր հաւաքում նոր գրոհի համար: Բոլշևիկյան կուսակցութիւնը չարժման անկումը համարելով կարճատե յերեուլթ, այն կարծիքին եր, թե շուտով պետք է հետևի հեղափոխական ալիքի նոր վերելք, վորը կարբի, կտանի ցարիզմը և Դուման:

1905 թ. դեկտեմբերին Տամերֆորսի (Ֆինլանդիա) բոլշևիկյան կոնֆերենցիայում, վորը ղեկավարում էյին Լենինը և Ստալինը վորոշում ընդունվեց բոյկոտի յենթարկել Պետական Դուման: Բոլշևիկները ժողովրդական մասսաներին կոչ արին հրաժարվել Պետական Դումայի ընտրութիւններից: Ընտրական կամպանիայի ժամանակ նրանք պարզաբանում էյին բոյկոտի պատճառները և ուժեղ ազիտացիա էյին մղում զինված ապստամբության համար, ընդհանուր, ուղղակի, հալասար և դադանի քվեարկության հիման վրա Սահմանադիր ժողով հրավիրելու համար:

Մենչեվիկներն ազիտացիա էյին մղում ընտրութիւններին մասնակցելու ոգտին. նրանք բուրժուազիայի համար իշխանության մեջ տեղ էյին պատրաստում:

Առաջին Դուման հաղթանակ չնորհեց լիբերալ բուրժուազիային ի դեմս, այսպես կոչված, կոնստիտուցիոն-դեմոկրատական կուսակցության «կադետների»: Կադետների թիւը առաջին Դումայում կազմում եր 197 մարդ: Կադետներն ամբիոնից մեծազդրող «ազատասեր» ճառեր ասելով՝ կուլիսների հետեւը դործարք էյին կնքում ցարիզմի հետ և աշխատում էյին Նիկոլայ II-ի կառավարութիւնից սակարկության միջոցով մինխտրական պորտֆելներ կորզել: Կադետները ժողովրդին խաբում էյին ամեն տեւակ խոստումներով, իսկ ըստ էյության ամեն ինչ անում էյին, վորպեսզի հեղափոխական հրդեհը հանդցնեն և ինքնակալության

հետ վորոշ համաձայնութեան գան: Յեւ Նույնիսկ այս «կաղե-տական Դուման» ցարական կառավարութեան սրտովը չեր:

Առաջին Պետական Դուման դոյութեան ունեցալ 72 որ (1906 թվի ապրիլի 27-ից մինչև հուլիսի 8-ը): Կառավարութեանն ա-մեն ինչ անում էր, վորպեսզի ցույց տա, վոր ինքը բանի տեղ չի դնում «Ժողովրդի ընտրականերին»: Դուման ներումն էր պահանջում, իսկ Նիկոլայ II-ի կառավարութեանը բանտերը ծայրահեղ աստիճանի լցնում էր՝ ուժեղացնելով բանտերները ու դյուղացի-ները դեմ ուղղված տերորը:

Յերկու ամիս ու կես հետո Դումայում յերկչոտ կերպով բարձրացիւց հողային հարցը. կաղեաններն առաջարկում էին դյուղացիներին հող հատկացնել «արդարացի զնահատութեամբ», այսինքն կաղեաններն ուղրում էին փրկագնովել հեղափոխութեանից և դյուղացիներին խարելով՝ ցարիզմը փրկել: Յարական կառավարութեանն այդ որինալիճը ևս «զավազրութեան» հա-մարեց և առաջին Դուման ցրեց: Դա մի «խղճուկ Դումա յեր իր խղճուկ կաղեաներով...» ինչպես այդ Դուման շեշտակի կերպով բնութագրել է ընկեր Ստալինը դեռ 1906 թվին:

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՈՒՄՆ ԵՅԻՆ ԸՆՏՐՈՒՄ ՅԵՐԿՐՈՐԴ ԴՈՒՄԱՅԻ ԱՆԳԱՄ

Առաջին Դուման ցրելով՝ ցարական կառավարութեանը նշա-նակեց նոր ընտրութեաններ:

Յերկրորդ Պետական Դումայի ընտրութեաններին բուշեիկ-ները կուսակցութեանն ախտիվ մասնակցութեան էր ցույց տա-լիս: Տվյալ մոմենտում իրազրութեանն այլ էր, քան առաջին Դու-մայի ընտրութեանները ժամանակ: Հեղափոխութեանը նվազում էր, անմիջական ղինված ապստամբութեան քիչ հույս կար: Պետք էր ողտադորձել մասսաները Դումայի միջոցով և Դումայից դուրս կազմակերպելու հնարավորութեանը: Բուշեիկ-ները կուսակցութեանը միշտ էլ սովորեցրել է պրոլետարիատին ու դյուղացիութեանը, վոր նրանց շահերը կարող են լուծվել

միայն հեղափոխական պայքարի միջոցով, այսինքն Դումայի պատերից դուրս մղվող պայքարի միջոցով: Այդ առավելագույն պարզությամբ արտահայտել է ընկեր Ստալինը, յերբ ի պատասխան առաջին Պետական Դումայի ցրմանը, նա զբուս էր. «Յրված Դումայի հետևից պետք է դա կազմակերպված փողոցը, Դումայի ավերակները վրա պետք է կառուցվի փողոցի հըրուսթյունը»:

Յերկրորդ Պետական Դուման զգալի չափով ավելի ձախ էր, քան առաջինը:

Առաջին և յերկրորդ Պետական դումաների կուսակցական կազմը¹

	1-ին	2-րդ
Տրուդովիկներ	94	104
Ժողովրդական սոցիալիստներ	—	16
Եսերներ (սոցիալիստ-հեղափոխականներ)	—	37
Ս.-դ. (սոցիալ դեմոկրատներ)	17	65
Ազգային բուրժուական կուսակցություններ	—	76
Կ.-դ. (կոնստիտուցիոնալիստ-դեմոկրատներ) և սրանց հարողներ	197	90
Անկուսակցականներ (կազմակերպված ու անկազմակերպ)	100	50
Աջեր (միապետականներ, ոկոյաբրիստներ)	26	54

Յերկրորդ Դումայի ընտրության արդյունքները ցույց տրվին, վոր ընտրողները վերնախավը (կալվածատերերն ու խոշոր բուրժուազիան) աջացել են, իսկ ստորին խավերը՝ խիստ ձախացել են: Մանր բուրժուազիան (մանավանդ գյուղացի ընտրողները) հաղթահարում էր սահմանադրական պատրանքները (պայքարի խաղաղ յերջի հույսերը): Ժողովուրդը տեսնում և հաս-

¹ Դումաների կազմը տրված է ըստ վ. Ի. Լենինի Յերկերի ժողովածույի 4. XI, հրատ. Յ-րդի ծանոթագրությունների:

Հանում եր, վոր կազեաների «սարլամենտարիզմ» խաղալը մի-
այն ուշացնում է հեղափոխութեան ամենակենսական և արմա-
տական հարցերի լուծումը:

Յերկրորդ Դումայում սեակցիոներները ակտիվացել էին և
ի դեմս «Հոկտեմբերի 17-ի միութեան» կառավարութեանից պա-
հանջում էին ամենախճուսական միջոցներ հեղափոխական շար-
ժումը ճնշելու համար:

Կազեաները՝ լիբերալ բուրժուազիայի կուսակցութեանը, —
ալեկի ու ալեի էին զողովում ցարիզմի հետ և հանդես գալով
«Դուման պահպանելու» լոզունգով՝ աշխատում էին «չլրգուել
կառավարութեանը». նրանք հարմարվում էին ցարական մինիս-
տրը Ստոլիպինի կախազանների ռեժիմին: Լենինը բնութագրելով
ստոլիպինյան ռեժիմը վորպես ցարիզմի բլոկը բուրժուազիայի
հետ՝ գրում եր. «Կարլաժատիրական հողատիրութեանը պահ-
պանելու նպատակով բուրժուական հեղաշրջում են կատարում
թե՛ Ստոլիպինը և թե՛ լիբերալները (կ.-դ. կուսակցութեանը):
Ստոլիպինը՝ ամենակոպիտ ու ասիական ձևերով, վորոնք ընդու-
նակ են հրահրել պայքարը դյուզում և ուժեղացնել հեղափո-
խութեանը: Լիբերալները գրանից վախենում են, չկամենալով
ամեն ինչ վտանգի յենթարկել, կողմնակից են զիջումների, բայց
այնպիսի զիջումների, վորոնք այնուամենայնիվ կպահպանեն
կարլաժատիրական հողատիրութեանը. բավական է հիշել վրկա-
նավճարը և, վոր ամենազլխափորն է, տեղական հողային կոմի-
տեները կարլաժատերերի ու դյուզացիների ներկայացուցիչներից
հավասար կերպով կազմելը կառավարութեան գործակալների նա-
խադահույթամբ: Տեղական հողային կոմիտեները կազմելու կազ-
մը կարլաժատերերի գերակշռութեան պահպանումն և նշանակում:
Փրկանավճարը դյուզացիական բուրժուազիայի ամբապնդումը և
դյուզացիական պրոլետարիատի ստրկացումն է»:

Յարական կառավարութեանը չեր ուզում նույնիսկ այն խըղ-
ճուկ զիջումներն անել, վոր աղերսում էին կազեաները:

1907 թ. հունիսի 3-ին յերկրորդ Դուման ցրլից, իսկ նրա
սոցիալ-դեմոկրատական Փրակցիան՝ ձերբակալից:

Պրովոկատորները ջանքերով ցարի դեմ ուղղված մի անշնորհ «դավադրութիւն» թխվեց, վորն իրը թե կազմակերպել էյին սոցիալ-դեմոկրատները: Բայց իսկական պատճառն այլ էր: Յարկովը ձգտում էր վտնչացնել նաև այս խառնածին ուսական պարլամենտը:

Այսպես ցարական կառավարութիւնը մաքրեց այն առաջին և յերկրորդ Դումայի հաշիւները, վորոնք դումարվել էյին 1905 թվի դեկտեմբերի 11-ի որենքի համաձայն, մի որենք, վորը կորզել էյին Մոսկվայի և Ռուսաստանի այլ քաղաքների բանվորները բացահայտ զինված պայքարի միջոցով:

Յերկրորդ Դուման դադարեցան ունեցալ 1907 թ. փետրվարի 20-ից մինչև 1907 թ. հունիսի 2-ը, այսինքն 102 որ:

Իսկ այն վոստիկանական տերորի մասին, վոր տեղի ուներ թե առաջին և թե՛ յերկրորդ Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ, խոսելն անգամ ավելորդ է: Զուր չէ, վոր Լենինը մատնանշում էր, թե Դումաներն ընտրվում էյին «ընտրութիւնների նկատմամբ կիրառվող այնպիսի զգվելի ու ստոր ճրնչման» պայմաններում, վոր դրա հետ համեմատած ընտրութիւնների ժամանակ յեվրոպական յերկրներում կիրառվող հալածանքներն ու տեսորը «դատարկ բան» էյին: Որինակ առ 1 մարտի 1906 թ. բացառիկ զրութիւնն ամբողջութամբ կամ մասնակիորեն մտցվել էր նահանգներին 70 տոկոսում, յերկրում մոլեգնում էյին պատժիչ արշավախմբերը և առանց դատ ու դատարանի մահապատիժները սովորական յերեվույթ էյին դառնում:

ՅԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԸ ԺՈՂՈՎՐԴԻՅ ԶԵՐ ՔԱՇՎՈՒՄ

Յերկրորդ Պետական Դուման ցրելու հետ միասին հրապարակվեց ընտրական մի նոր որենք, վորը աշխատավորների ընտրական իրավունքները հասցնում էր մինիմումի:

Դիմակները դեն նետվեցին: Բուրժուազիան դուրս թեքեց

Մտորիպինի առաջ: Յարիզմը նախորոք բաշխել եր տեղերը Դու-
մայում, տեղերի ճնշող մեծամասնությունն ամբայնեղով կալվա-
ծասերերին ու խոշոր բուրժուազիային: «Կառավարությունը պարզ
փորձի միջոցով հունիսի 3-ի ընտրական որենքն այնպես եր ձեռել,
վոր Դումայում յերկու հնարավոր մեծամասնություն ստացվեց-
ոկտյաբրիստական-սեհարյուրակային և ոկտյաբրիստական-կա-
ղետական: Թե՛ մեկը և թե՛ մյուսը անպայման հակահեղափոխա-
կան են» (Լենին):

Յարական կառավարության ընտրական նոր որենքը հան-
դում եր նրան, վորպեսդի Դումայում առաջին տեղն առաջ քաշ-
վեյին խոշոր կալվածատերերը: Բավական ե մատնանշել, վոր
Յեվրոպական Ռուսաստանի 29 նահանգներում ընտրողների միջև
բացարձակ մեծամասնություն եյին կազմում հողատերերի կող-
մից ուղարկված ընտրողները: Քաղաքներում մեծամասնություն
ապահովում եյին կապիտալիստների համար: Ամբողջ Ռու-
սաստանում առանձնացվել եր 6 նահանգ, վորտեղ բանվորական
կուրիաներից ապահովվում եր միայն մեկական պատգամավորի
ընտրություն: Այսպիսով յերկրորդ Դումայում ապահովվում եր
մեծամասնություն կալվածատերերի ու կապիտալիստների հա-
մար:

Միբերը, Լեհաստանը, Կովկասը և Միջին Ասիան նոր ընտ-
րական որենքով ճանաչվում եյին վորպես «քաղաքականապես չը-
հասունացած»: Կովկասն առաջին և յերկրորդ Դումա ուղարկված
25 պատգամավորի փոխարեն ըստ նոր որենքի իրավունք ունե-
ր ուղարկել միայն 10 պատգամավոր, իսկ Միջին Ասիան (9 մարդ),
վորը ունեցել ե 21 պատգամավոր, ըստ նոր որենքի բոլորովին
զրկված եր ընտրելու իրավունքից: Յարական կառավարությունը
կամենում եր ստեղծել «լիզով ուս» Դումա, այսինքն բացա-
հայտորեն սեհարյուրակային Դումա, վորովհետե ցարիզմը «խ-
կական ուս» եր հաչվում միայն այն մարդուն, վորն անչափ
նվիրված եր ցարիզմին:

Ռուսաստանը մնում եր ժողովուրդների բանտ: Լեհերի,

Կովկասի, Միջին Ասիայի և մյուս ազդու թյունների հետապըն-
գումներին միանում էր միջնադարյան ճնշումը հրեաների նկատ-
մամբ: Նոր որենքով հրեաների միայն 5 տոկոսը ձայնի իրավունք
ունենր:

Յարական որենքն ամեն ինչ անում էր, վորպեսզի սահմանա-
փակի բանվորները ու քաղաքային մանր բուրժուազիայի իրա-
վունքները զանազան ցեղեր (սահմանափակումներ) սահմանե-
լով: Դումայի ընտրություններին մասնակցելու իրավունք ունե-
նալու համար բանվորները պետք է միևնույն ձեռնարկության
մեջ աշխատեյին առնվազն վեց ամիս: Առաջավոր բանվորներին
այդ միշտ չէր հաջողվում, վորովհետև նրանք միշտ վոստիկա-
նության հսկողության տակ էյին և Ֆարբիկա-դործարանային
ազմինխտորացիայի աչքում էլ վատ համարում ունեյին: Նրանց
հաճախ էյին աշխատանքից հեռացնում և նրանք ձեռնարկությու-
նից ձեռնարկություն, մի դործարանից մյուսն էյին թափառում
և, հետևաբար, միշտ ընտրական իրավունքներից զրկվելու ըս-
պառնալիքի տակ էյին դտնվում:

Մանր բուրժուազիայի համար սահմանվել էր դաժան բնակա-
րանային ցեղ, ըստ վորի, ձայնի իրավունք վայելելու համար
պետք էր ունենալ բնակարան և վճարել բավական մեծ դումար
կազմող բնակարանային տուրք:

Յարական կառավարությունն ատում էր յերիտասարդությա-
նը և վախենում էր նրանից: Ընտրություններին մասնակցել կա-
րող էյին 25 տարեկանից բարձր տղամարդիկ: Կանայք բոլորո-
վին զրկված էյին ընտրական իրավունքներից: Ըստ այս որենքի
դյուղացիները զրկված էյին տասը տնից արդեն մի անգամ ըն-
տրված լիազորներին վերընտրելու իրավունքից: Այսպիսով յեր-
րորդ Դումայի ընտրության համար դումարված վոլոստային
ժողովները բաղկացած էյին դեռ յերկրորդ և նույնիսկ առաջին
Դումայի համար ընտրված լիազորներից:

Անմիջապես Դումայի պատգամավորներ ընտրող քաղաքնե-
րի թիվը կրճատվել և հասցվել էր 5-ի:

Հողատերերն ու կապիտալիստներն ունենալով մանդատների

A II
9938

1228

ճնշող մեծամասնութիւնն՝ կարող էլին պարզապէս նշանակել Պետական Դումայի անդամներ ըստ իրենց հայեցողութեան: Զուր չէր, վոր թունդ միապետական Կոկոլցեկը, ցարական Ֆինանսներէ մինիստրը, 1908 թ. ապրիլի 24-ին Դումայում անկեղծորեն հայտարարեց, թե «մեղանում, փառք աստծու, պարլամենտ չկա»:

Այսպէս եր 1907 թ. հունիսի 3-ին ցարական կառավարութեան հրատարակած ընտրական որենքը:

ՈՒՄՆ ԵՅԻՆ ԸՆՏՐՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐՆ ՈՒ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Յարական կառավարութիւնը կուրս եր վերցրել դեպի ամենասեռ օրէնքի մեծացում:

Բուրժուազիան խնամքով ջնջում և ծրարելիքներից «հեղափոխական» պահանջները: Կապետական և ռուսարքիստական կուսակցութիւններէ պարապլուշներէ բերանով նա հնազանդութիւն և պատրաստակամութիւն և հայտնում ցարիզմին վոչ թե յերկուցից դրդված, այլ խղճով ծառայելու նրա մեծապետական, իմպերիալիստական նպատակներին:

Դումայի անդամ են «ընտրում» պետքական և ամուր մարդկանց:

Դումայում առաջին մարդն և դառնում Ա. Ի. Գուչկովը, խոշոր արդյունաբերող, վաճառական, թրծված պոլիտիկան, մի մարդ, վորը խորը կերպով ատում եր ժողովրդական մասսաներին:

Կիյեվի նահանգից անցել եր Վ. Շուլցինը, մի իսկական սեհարյուրակային, վորն ատում եր Ռուսաստանի բոլոր ճնշված ազգութիւններին, վորը յերկրպագում եր ցարին և լի յեր դայանային առեւտրութեամբ դեպի բանվորներն ու դուրապիները:

Ռոճյանկոն, վորը Յեկատերինոսլավի կալվածատեր եր, տասնյակ հազարավոր դեսյատին հողի տեր, վորը գտնում եր,

վոր ժողովրդին սանձած պիտի պահել, նրան ազատութիւն չըպետք է տալ :

Քաղցրտաձայն կազեա Մակլակովը, մի ծախու փաստաբան, վորը դատարաններում պաշտպանում եր բոլոր հանցադործներին, միայն թե նրանք իրեն լավ փող վճարեն: ցարական մի նիստրի յեղրայր, վորը քիչ եր տարբերվում իր յեղբորից :

Սեվհարյուրակային սրիկա Պուրիշկէիչը — Բեսարարիայի կալածատեր, վորը Դումայում հալածում եր բանվորական պատգամավորներին, իսկ Դումայից դուրս՝ կազմակերպում եր ճնշված ազգութիւններին, բանվորներին ու գյուղացիներին ջարդեր: Մայրահեղ միտպետական, վորը պաշտպանում եր անսամանափակ ինքնակալութիւնը :

Սրա բարեկամ ու զինակից Մարկով յերկրորդը, վորը հայտարարում եր թե «Ռուսաստանի ամբողջ բանվոր դասակարգէ կրճքին հրացանով նշան պիտի բռնի» :

Միլյուկովը — կազետական կուսակցութեան պարագլուխը, վորը հայտարարեց, թե իր կուսակցութիւնը նորին մեծութեան (ցարին) դեմ ուղղված ոսրդիցիայի կուսակցութիւն չե, այլ նորին մեծութեան կուսակցութիւն :

Բնութագրելով Միլյուկովին ու Գուչկովին, վորպես տիրապետող դասակարգերի շահերն արտահայտող մարդկանց՝ Լենինը գրում եր, թե Դումայում նրանք «... պատահական մարդիկ չեն: Նրանք — կալվածատերերի ու կապիտալիստներին ամբողջ դասակարգի ներկայացուցիչներն ու պարագլուխներն են: Նրանք կաշկանդված են կապիտալի շահերով: Կապիտալիստները չեն կարող իրենց շահերից հրաժարվել, ինչպես մարդս ինքն իրեն չի կարող մարդից բռնած վեր բարձրացնել» :

Ա. Ֆ. Կերենսկին — ապագա «գահի վրա բազմած խեղկատակը», մի մարդ, վորը Դումա յեր յեկել իր խարած գյուղացիներին ուսերի վրա նստած: Ճամարտակող և ստախոս, վորը ծածկում եր իր հակահեղափոխական ելութիւնը ժողովրդական շահերի պաշտպանութեան մասին արտասանած բարձրաձայն ֆրբազներով :

Ահա այն մտորելի, վորոնք «առաջին ջութակին» եյին նվազում յերրորդ և չորրորդ Պետական Դումաներում :

ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Յարական կառավարութիւնը ձգտում եր ստեղծել հլու Պետական Դումա, վորի միջոցով կարելի լիներ անց կայնել ամեն մի որենք :

Ինչպէս արդեն ասված է, յերրորդ Պետական Դումայի ընտրական կամպանիան սկսվեց ուսուցչայի ծանր պայմաններում : Յարական կառավարութիւնը մեկը մյուսի հետեւից խլում եր այն խղճուկ «ազատութիւնները», վոր նա ստիպված եր յեղել տալ աշխատավոր մասսաներին 1905 թ. հեղափոխութեան ճնշման տակ : Յերկիրը դտնվում եր կամ ուժեղացրած և արտակարգ պահպանութեան կամ սաղմական դրութեան պայմաններում : Յերկիրը չափչփում էյին պատժիչ արչալախմբերը, առանց կանդ առնելու «աշխատում էյին» սաղմա-զաշտային դատարանները : Սրանք կախաղանի էյին դատապարտում հեղափոխական շրթման մասնակիցներին : Բանվորներն ամենամանչան առիթով, իսկ հաճախ առանց վորեւս առիթի, ձերբակալվում և աքոբրվում էյին «վոչ այնքան հեռու վայրերը» :

Այս ծանր պայմաններում բոլշևիկները կուսակցութեան առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը բանտորական մասսաներին կոչ արեց մասնակցել յերրորդ Պետական Դումայի ընտրութիւններին : Կուսակցութիւնն աշխատում եր ընդհատակում և կարևոր եր ողտադործել լեզալ հնարավորութիւնները մասսաների հետ կապ պահպանելու համար : Պեսք եր ողտադործել Դումայի ամբիոնը ստորխալինյան քաղաքականութիւնը մերկացնելու համար, մի քաղաքականութիւն, վորին պաշտպանում էյին «ժողովրդական ներկայացուցիչները», կազեաներն ու մյուսները :

Ռ. Մ. - Դ. Բ. Կ. յերրորդ կոնֆերենցիայում (1907 թ. ոգոստոսի 3—5) հարց եր զբվել Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու :

Դուժան բոյկոտի յենթարկելու կողմնակից դուրս յեկավ Հեղափոխութեան զղլելի դավաճան Լ. Կամենեկը և մի քանի ուրիշները: Ընկեր Լենինն իր առաջարկը սաշտպանեց և կոնֆերենցիան վորոշեց ընտրական կամպանիային և Հենց յերրորդ Դուժային մասնակցել:

Բոլշևիկները վորոշեցին ոգտագործել Դուժայի ամբիոնը ժողովրդական մասսաների ղիտակցութեան մեջ սոցլալիզմի դադափարներն ու Հեղափոխական լողուններն ամբաստնելու, ինչպես և սեակցիայի դեմ սլայբարելու համար:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Մեր կուսակցութեանը մեծ նախընտրական աղիտացիա ծափալեց բանվորական լայն մասսաների շարքերում յերրորդ Դուժայի ընտրութեաննրի շուրջը:

Հիշում եմ, թե ինչպես ելին տեղի ունենում Դուժայի ընտրութեաննրն Իվանովո-Վոդնեսենսկում: Այդ ժամանակ յես աշխատում ելի Իրյազնովի չթատովման Փարբիկայում և 1907 թ. սեպտեմբերի 8-ին ընտրվեցի յերրորդ Պետական Դուժայի ընտրութեաննրի առթիվ լիսգոր: Բոլորովին հույս չկար, թե կալվածատիրական Դուժան բանվորներին վորեւ բան կարող և տալ: Քաղաքի ձեռնարկութեաննրում տեղի ունեցած ընտրական ժողովները բաղմամարդ չելին, բայց կալացան բոլոր ֆարբիկաներում և գործարաններում: Պարզվեց, վոր ընտրվել են բոլշևիկների թեկնածուները և բոլշևիկներին համակրող անկուսակցականները: Միայն մի գործարանում կաղես ընտրվեց:

1907 թ. հոկտեմբերին բանվորների կողմից ընտրված 165 լիսգորներ յեկան Վլադիմիր քաղաքը նահանգական համագումարին մասնակցելու՝ վեց ընտրողներ ընտրելու համար:

Ժամանելով Վլադիմիր՝ լիսգորները վորոշեցին հալաքվել և գրուցել: Շենք ել գտնվեց ալսպես կոչված «ժողովրդական տուն» թեյարանի մեծ դահլիճում:

Սորհրդակցութեան ժամանակ վորոշեցինք փոքեւ նախընտրական ժողով հրապիրելու թույլտվութեան ստանալ:

ժողով հրավիրելու առթիվ մեր խնդրին նահանգապետը կատեգորիկ մերժումով պատասխանեց:

— Ձեր ինչի՞ն է հարկավոր ժողովը. դուք յերևի բոլորդ ել սոցիալ-դեմոկրատներ եք և իհարկե հանցազորժ ազխտացիա յեք մղելու: Վո՛չ, ձեզ ժողով հրավիրել յես թույլ չեմ տա:

— Բայց ինչպես անենք, պարոն նահանգապետ. չե՞՞ վոր մեկ հարկավոր ե միմյանց հետ ծանոթանալ: Հարկավոր ե թեկնածուներ նշել, վորպեսզի իմանանք, թե ումը պիտի քվեարկենք:

— Այդ ինձ չի վերաբերում... ինչպես ուզում եք, այնպես ել քվեարկեցեք, իսկ ժողով թույլ տալ յես չեմ կարող: Գնացե՛ք վոստիկանապետի մոտ — ինչպես նա կուզենա, այնպես ել կլինի: Այդ նրա դործն ե, իսկ յես չե՛մ կարող, չե՛մ կարող:

Նա շուռ յեկավ և արագ կերպով մտավ իր կաբինետը:

Գնացինք Վլադիմիրի վոստիկանապետի մոտ, բայց նա ել մեր խնդրին կատեգորիկ մերժումով պատասխանեց: Մենք սպացուցում եյինք, վոր նա պետք ե դործի համաձայն կառավարության կարգադրությունների, վորը թույլատրել ե նախընտրական ժողովները: Մենք նրան հայտարարեցինք, վոր նրա մերժումն ասորինի յե: Վոստիկանապետը բռունցքով կուրծքը ծեծելով դուռաց:

— Վոչ մի որենք չեմ ուզում ձանաչել: Ահա ձեզ որենք: Որենքը յես եմ: Վոչ մի ժողով թույլ չեմ տալիս և աստված մի արասցե թագուն հավաքվեք: Բոլորդ կձերբակալվեք և խիստ կտուժեք, յեթե իմ արդելքս խախտեք:

Վոստիկանապետի մոտից վերադառնալով՝ մենք «ժողովըրդական տան» նույն թեյարանում կուսակցության անդամների նեղ կոնսալիերատիվ ժողով սարքեցինք, վորտեղ վորոշից հենց նույն որը յերեկոյան լիազորների անլեզալ ժողով հրավիրել:

Մեզ դեմ եր անկուսակցականների սոսի մի փոքրիկ խմբակ, վորոնք դարձացած հարցնում եյին.

— Վո՞նց թե անլեզալ ժողով. չե՞՞ վոր այդ արդելված ե, չե՞՞ վոր մեկ կարող են ձերբակալել...

ժողովի տեղը հանձնարարվեց գտնել Վլադիմիրի տեղական

ընկերներին: Յերբ սկսեց մթնել, փոքրիկ խմբերով սկսեցինք հավաքվել լիազորների ժողովի:

Վլադիմիրի շուրջը անտառներ համարյա չկան: Քաղաքի շուրջը դաշտեր ու բանջարանոցներ են: Միայն տեղ-տեղ փոքրիկ թփուտներ են: Հենց այդ խղճուկ թփուտներում ել վորոշվեց ժողով անել:

Բավական ժողովուրդ հավաքվեց, լիազորները ճառերով հանդես յեկան: Ճառերից հետո նշեցինք ընտրողների թեկնածուներ:

Իշխանությունները ժողովի մասին չիմացան, այդ պատճառով ել վոչ մի ունդրեսիա տեղի չունեցավ:

Մյուս որն առավտայան ինչ վոր նկատառումներով վոստիկանությունը մեզ թույլ տվեց լեզալ կերպով հավաքվելու:

Այն շենքում, վորտեղ տեղի յեր ունենում ժողովը, ներկա յեր վոստիկանական պրիստայը, մուսքի դռան մոտ կանգնած եր վոստիկանների մի ամբողջ վոհմակ: Այսպիսի պայմաններում պետք եր լինում մեծ զգուշությամբ խոսել, վորովհետև պրիստայը կառչում եր իրեն դուր չեկած ամեն մի բառից: Սակայն մենք կարողացանք այդ ժողովն ողտագործել դործի համար մեծ սպուտով: Բողոքիկներն իրենց յելույթներով բարձրացրին լիազորների տրամադրությունը և առաջ տատանվող անկուսակցականների մի զգալի մասի համակրանքը մեր նկատմամբ ապահովվեց:

Հինց նույն որը Ալեյվական ժողովարանի դահլիճում Վլադիմիրի քաղաքադուլու Սոմովի նախադահուլթյամբ բացվեց բանվորական լիազորների նահանագական ընտրական ժողովը վեց ընտրողների ընտրությունը կատարելու համար: Ժողովն անցավ կողմակերպված, նախորդ որը նշված բոլոր թեկնածուները ճայների ճնշող մեծամասնությամբ ընտրվեցին:

Այսպիսով լիազորների և ընտրողների ընտրության ընթացքում բողոքիկները փայլուն հաղթանակներ տարան, մնում եր միայն բարձրանալ յերբորդ և վերջին աստիճանը— վեց ընտրողների թվից ընտրել յերբորդ Պետական Դումայի մի պատգա-

մալոր: Բայց դիտարկում են արդեն կատարված եր: Ամենամեծ
դժվարությունները հաղթահարված եյին: Յերբ բոլոր վեց ընտ-
րողներն էլ բոլջևիկներ եյին, դործը կարելի յեր վորոշված հա-
մարեւ: Դուժայի անդամ կանցնի նա, ուժ կուզարկի կուսակ-
ցությունը:

Լիազորները վերադարձան տեղերը:

Վեց բոլջևիկ ընտրողների ընտրությունը վոստիկանության
դուրը չեկավ: Վոստիկանությունը լավ հասկանում եր, թե վոր-
քան անախորժություններ ե պատճառելու նահանգի բանվորների
կողմից բոլջևիկ պատգամալոր ընտրելը:

Վոստիկանությունն սկսեց դրան խանդարելու միջոցներ
վնտռել ընտրողների ատելի վեցյակի դոնե մի մասը «մեկուսաց-
նելու» ճանապարհով: Սկսվեցին խուզարկություններ և հանցա-
նչանքների վորոնումներ այդ մեկուսացումը կատարելու համար:
Ինձ ել խուզարկեցին:

Հոկտեմբերի կեսերին Պետական Դուժայի անգամներ
ընտրելու համար Վլադիմիր ընտրողների նահանգական ժողո-
վին մեկնելուց մի քանի որ առաջ ինձ մոտ «հյուրեր» շնորհ բե-
րին: Հոկտեմբերյան մութ դիշեր եր: Կես դիշեր: Փայտե հին
վորքիկ յերեք պատուհան ունեցող տնակում աշխատանքային ո-
րից հետո բոլորը խորը քնած եյին: Հանկարծ պատուհանը պինդ
բաղխեցին: Բոլորն արթնացան, դուրը բաց արին: Բնակարան
ներս խուժեցին մի տասը վոստիկան վոստիկանական վերահսկիչ
Պրոստոսերդովի դիտարկությամբ:

Հարցներով թե այտե՞ղ ե արդյոք Սամոյլովի բնակարանը,
ինձ ցույց տվին ժանդարմերիայի պետի թուղթը, վորով առա-
ջարկվում եր ինձ մոտ խուզարկություն կատարել:

Վոստիկանները խուզարկեցին իմ իրերը և ամբողջ բնակա-
րանը, բայց բացի լեզալ դրճերից և հանդանակության մի թեր-
թից, վորով Վլադիմիրում հանդանակություն եր կատարվել
յերկրորդ Պետական Դուժայի դատապարտված անգամի ուղտին
Իվանովի բանվորների կողմից, վորչինչ չդատան:

Հանդանակության թերթը միակ «հանցագործ» նյութն եր,

վոր ինձ մոռ դասն: Վոստիկանական վերահսկիչը արձանագրութ-
յուն կազմելիս մի ամբողջ հարցաքննություն սարքեց ինձ: Նա
հարցնում էր, թե հայտնի՞ յե արդէոք ինձ, վոր պետական հան-
ցագործի ոգոտին հանգանակություն կատարելը ծանր հան-
ցանք է:

Յես նրան պատասխանեցի, վոր հանցավոր բան չեմ համա-
րում այն, վոր նահանգի բանվորների ներկայացուցիչներն իրենց
նախկին, թեկուզ և բանտարկված պատգամավորին ողնություն
նն ցույց տվել և այլն: Այնուհետև վոստիկանական վերահսկի-
չը հարցնում էր, թե ո՞վ է յեղել այդ դործի նախաձեռնողը և
յննթադրություններ անում, թե այդ նախաձեռնողը յես եմ յե-
ղել:

Սպառնալով ինձ խիստ պատասխանատվությամբ, վերահս-
կիչ փքված և դանդաղ հեռացավ վոստիկանների վոհմակի հետ
միասին: Խուզարկությունից քիչ անց յես մեկնեցի Վլադիմիր:
Այս անգամ մեր ընտրողները մասնակցում էին կազեաների կազ-
մակերպած նախընտրական ժողովին, վորտեղ հանդես էին դա-
լիս դանաղան քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչ-
ներ: Հանդես յեկանր և մենք: Ժողովում ճառ արտասանեց
Շուլյակի դավառի դյուղացի Խրամովը: Նա հայտարարեց, թե
վորքան էլ վոր պարոնայք կալվածատերերն աշխատեն դյուղա-
ցիներին հիմարացնել, դյուղացիները վաղ թե ուշ այդ հողը կալ-
վածատերերից կխլեն: «Հողն,— ասում էր Խրամովը,— մերն է,
դյուղացունը, մենք ենք այդ հողը մշակում և մենք էլ նրա տերը
կղառնանք»:

Իմ յեւույթի ժամանակ ժողովի նախադահ կազետը մի քանի
անգամ նախադուռացրեց, թե թույլ չի տա Դումայի պատերից
դուրս յեղած պայքարի մասին խոսել: Նա խնդրում էր խոսել
միայն Պետական Դումայում կատարվելիք որինսդրական աշխա-
տանքի մասին և այն մասին, թե ում պետք է ուղարկել այդ
Դուման: Դրան վոչ մի ուշադրություն չդարձնելով՝ յես շա-
րունակեցի բուլչեիկյան տեսակետը: Յես ասում էի, թե կալվա-
ծատիրական Դուման վոչինչ չի կարող տալ աշխատավորներին,

վոր միայն Գուժալից դուրս մղվող վճռական պայքարի միջոցով կարելի չե ձեռք բերել այն, ինչ անհրաժեշտ և ժողովրդին :

Նահանգից ընդամենը հավաքվել եր 89 ընտրող ճնշող մեծամասնությամբ կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ մտնող ԲԵՏ բախտիան շատ տերտերներ հայրենիքս հարստական հայացքներով սրանք կամ աչեր կամ սկայարբխաներ եյին, ցարական ինքնակալության հավատարիմ ծառաներ : Կային նաև վորոշ քանակությամբ կաղեխներ, ապա Ա անկուսակցական գյուղացի (մեծամասնությունը գյուղական կուլակներ) և վերջապես մենք, վեց հոգիս— բանվորների կողմից ընտրված բոլջևիկներս :

Վարդիմիրի նահանգից ըստ որենքի պետք և ընտրվեր վեց պատգամավոր : Ընտրական որենքով նախատեսնված եր, վար բանվորներից ու գյուղացիներից անպայման մեկական պատգամավոր պիտի ընտրվեր : Բայց, վորպեսզի ընտրելինք բանվորական շահերի իսկական պաշտպան, անհրաժեշտ եր դասակարգային դիտակցականություն և ամուր կարգապահություն : Բանվոր ընտրողների շարքերում յերկու պայմանն ել առկա յեր, գյուղացիների շարքերում խառնաշփոթություն եր տիրում, նրանք անկազմակերպ եյին : Յեվ ընտրության արդյունքներն ել այս յերկու խմբակներից իրար տրամադծորեն հակառակ ստացվեցին :

Բոլջևիկները նշեցին մի թեկնածու, իսկ մնացած հինգ ընտրողներին առաջարկվեց քվեարկությունից հրաժարվել : Միասնական կամքով և բոլջևիկյան վորոշումով միախմբված՝ մենք յեկանք ընտրական ժողովի Այնվականության ժողովարանի շենքը :

Ժողովին նախադահում եր ազնվականության նահանգական պարագլուխը— իշխան Գոլիցինը : Գլխարկությունը կատարվում եր գնդակներով : Ընտրության ընթացքում պարզվեց, վոր վոչ միայն բանվոր ընտրողները, այլև կալվածատերերն ու բուրժուազիան նախորոք լիովին համաձայնության եյին յեկել Գուժալի անդամների թեկնածության վերաբերյալ : Կազմակերպվածություն չկար միայն գյուղացիների մոտ :

Յերբ հերթը հասավ մեր ընտրողներին, ապա նախագահի այն հարցին, թե ով ե ուզում քվեարկվել, բոլոր ընտրողները, բացի պատգամավորության համար նշվածից, հրաժարվեցին քվեարկելուց: Երբուհե այն յեզամ: Էր պատգամավորության քանվորներէց յերրորդ Պետական Դումա ընտրվեց բոլշևիկ, այն էլ այն բոլշևիկը, վորին առաջագրել եր կուսակցական կազմակերպությունը:

Գյուղացիների ընտրությունը միանգամայն վատ եր բնթանում: Գյուղացիական ընտրողները մեզ քաղաքականապես մոտիկ միայն մի մարդ կար, վորի ազդանունն եր Խրամով: Վլադիմիր գալով՝ նա անմիջապես կապվեց մեզ հետ: Մենք տեսանք, վոր նա հեղափոխականորեն տրամադրված, բանվոր դասակարգին քաղաքական հայացքներով մոտիկ մի մարդ ե: Մնացած գյուղացիական ընտրողները Վլադիմիր գալով՝ անմիջապես կապվեցին աջերի և ոկտյաբրիստների հետ: Սրանց ճնշող մեծամասնությունը կուլակներ եյին (վոլոստային ավազներ, գյուղական արհեստավորներ, պարզապես ունեւոր և կուլակային աարեր):

Վորքան էլ վոր մենք աշխատում եյինք նրանց համոզել, թե անհրաժեշտ ե Դումայի անդամ անցկացնել Խրամովին, դրանից վոչինչ չստացվեց: Նրանք հերթով բոլորն էլ քվեարկվեցին և այդ պատճառով բուրժուա-կալվածատիրական մեծամասնությանը հնարավորություն տվին իրենցից ընտրել նրան, ով հաճելի յեր և պետք եր այդ մեծամասնությանը: Վլադիմիրի նահանգի գյուղացիներից յերրորդ Պետական Դումայի անդամ անցավ ինչ-վոր կուլակ Բուրլակով— աջերի և ոկտյաբրիստների թեկնածուն:

Իվանովո-Վոզնեսենսկից մեկնելու ժամանակ Պետական Դումայի անդամ ընտրված բոլշևիկ-պատգամավորին հանդիսավոր կերպով ճանապարհ դրին: Ճանապարհ ղցելու հավաքվեցին բազմաթիվ բանվորներ: Կայարանի առաջ գտնվող հրապարակն ամբողջովին դրավել էյին բանվորները: Ընկերներից մեկը կարգաց «բանվորների նակազն (պատվերը) իր պատգամավորին», վորին մեր պատգամավորը մի ճառով պատասխանեց: Մի շարք

ընկերներ լեյուլթ ունեցան: Վոստիկանությունը չէր միջամտում և վոչ մի միջադեպ տեղի չունեցավ:

Ընտրությունների նկարագրված պատկերը տիպական է ամբողջ Ռուսաստանում ըստ բանվորական կուրիայի տեղի ունեցած ընտրությունների համար: Կարելի չէ համարել, վոր փոքրիկ շեղումներով այդպես էլին ընտրում բանվոր պատգամավորներին ամեն տեղ: Յերրորդ Դոմայի վեց պատգամավոր-բոլշևիկները զեմ-հանդիման էլին կանգնած հարյուրավոր բուրժուա-կալվա-ծատիրական պատգամավորների:

ՅԵՐՐՈՐԳ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

«III ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Կալվածատերեր

Աջերը	46
Նացիոնալիստները	74
Անկախ նացիոնալիստները	17
Աջ ոկտյաբրիստները	11
Ոկտյաբրիստները	120
<hr/>	
Ընդամենը կառավարական կուսակցությունները	268
Բուրժուազիա	
Պրոգրեսիստները	36
Կադետները	52
Լեհական կոլոն	11
Լեհ-լիտվական-բելոռուսական խումբը	7
Մուսուլմանական խումբը	9
<hr/>	
Ընդամենը լիբերալներ	115
Բուրժուական դեմոկրատիա	
Աշխատավորական խումբը (տրուզովիկներ)	14
Բանվորական դեմոկրատիա	
Սոցիալ-դեմոկրատները	13
<hr/>	
Ընդամենը դեմոկրատներ	27
Անկուսակցականները	27
<hr/>	
Ընդամենը	437

III Պետական Դումայում կար յերկու մեծամասնություն. 1. աջերն ու ոկտյարբիսաները= 268 մարդ 437-ից. 2. ոկտյարբիսաներն ու լիբերալները=120+115=235 մարդ 437-ից: «Յերկու մեծամասնություններն ել հակահեղափոխական մեծամասնություններ են» (Լենին):

Իրենց սոցիալական դրությամբ դրանք աղնվական-հողատերեր, խոշոր կապիտալիստներ, գյուղական կուլակներ էյին և բուրժուական ինտելիգենցիա:

Յերրորդ Պետական Դումայում կազմվեց պրավոսլավ (ուղղափառ) հոգևորականության հատուկ խումբ, վորին ղեկավարում էյին Յեվլոդիյ և Մխարոֆան յեպիսկոպոսները: Այս խումբը բացեիրաց պաշտպանում եր ցարիզմի կիսաճորտատիրական կարգերը: Տերտերները պահանջում էյին արտոնություններ պրավոսլավ հոգևորականության համար և ալլադալանների փոխնչացում: «Յեկեղեցու Ֆետալական արտոնությունների պաշտպանությունը, միջնադարյան կարգերի բացահայտ պաշտպանությունը — ահա յերրորդ Դումայի հոգևորականության մեծամասնության վարած քաղաքականության եյությունը» (Լենին): Պատգամավոր-տերտերներն ամեն կերպ ոժանդակում էյին այն որենքներին, վորոնց նպատակն եր ունևիր գյուղացիության և կուլակության շահերի պաշտպանությունը: Մխարոֆան յեպիսկոպոսը հավատացնում եր, թե «պետք ե ոգտակար ճանաչել մեր գյուղացիների նոր կենցաղը արևմտա-յեվրոպական ֆերմերների որինակով կառուցելը»:

Այսպես եր ըստ կուսակցական-քաղաքական և սոցիալական կազմի յերրորդ Պետական Դուման:

Ահա ինչ ե ասել յերրորդ դումայի մասին Վ. Ի. Լենինը. «Յերկրորդ Դուման յերրորդ Դումայով փոխելը այդ ոկտյարբիստորեն աշխատող կադետի փոխարինումն ե ոկտյարբիստով, վորը գործում ե կադետի ողնությամբ: Յերկրորդ Դուման գլխավորում եր բուրժուական ինտելիգենտների կուսակցությունը, վորոնք ժողովրդի հաշվին իրենց ղեմովիրատներ էյին կոչում և բուրժուազիայի հաշվին ոժանդակում էյին կառավարությանը:

Յերբորդ Դուման պետք է դիտարկուի կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի կուսակցութիւնը, վորը ցուցադրովի սպարդիցիայի և դործարար ծառայութիւնների համար վարձու է բուրժուական ինտելիգենցիային»:

«ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱԼԱՏԸ»

Վորպետի կառավարութիւնն իրեն ապահովի Դումայի կողմից առհասարակ անցանկալի որենքների ընդունումից, 1906 թ. ապրիլի 24-ին, ախինքն առաջին Պետական Դումայի բացումից յերեք ուր առաջ, կառավարութիւնը հրատարակեց մի կանոնադրութիւն Պետական խորհուրդ ստեղծելու մասին, վորը ամբողջ մեծ որենադրական իրավունքներ ստացալ, ջան Պետական Դուման: Ստեղծվեց յերկրորդ պալատ: Այդ կանոնադրութիւն համաձայն Պետական խորհուրդը պետք է բաղկանալ կիսով չափ ընտրովի և կիսով չափ ցարի կողմից նշանակված անձերից: Յարը նշանակում էր Պետական խորհրդի նախագահին և նախագահի տեղակալին:

Պետական խորհուրդի անդամների կազմը ծայրահեղ հակահեղափոխական կազմ էր: Այդ խորհուրդի անդամներից 6-ը հոգեւորականութիւնից էին, 34-ը՝ դեմստիւններից, 26-ը՝ հողատերերից (վոչ դեմստիոյական նահանգների), 18-ը՝ աղնվական ընկերութիւններից, 12-ը՝ առևտրական ու արդյունաբերական հիմնարկներից, 6-ը՝ դիտութիւնների Ակադեմիայից և համարարանների խորհրդից: Լիազորութիւնների ժամկետը սահմանվել էր 9 տարով: Յուրաքանչյուր յերեք տարին մի անգամ ընտրված անդամների մի յերբորդը վերընտրվում էր:

Պետական խորհուրդը ծայր աստիճան օճակցիոն հիմնարկութիւն էր և ցարական ինքնակալութիւնն պահակը: Այդ խորհուրդն անշեղորեն արդեւակում էր նույնիսկ այն որենքների անցումը, վոր մշակում էր բուրժուա-կալվածատիրական Պետական Դուման: Բացի Պետական խորհուրդը ցարական ինքնակալութիւնն ոգտագործում էր այնպիսի ծայրահեղ օճակցիոն

մի որդան, ինչպես սենատը, վորպեսզի ել ավելի կրճատի բան-
վորների ու դյուղացիների առանց այն ել կիսատ-պատ ընտրա-
կան իրավունքները:

Առաջին Պետական Դուման ցրելուց հետո Ստոլիպինի կա-
ռավարութունը դեռ սիրտ չարավ ընտրական որենքը փոփոխե-
լու: Նա դիմեց սենատի որենքները մեկնաբանելու իրավունքին:
Յերևան յեկան այսպես կոչված «Սենատի մեկնաբանութուն-
ները»: Այսպես որինակ հատուկ մեկնաբանութուն տրվեց
«քնակարան վարձող» տերմինին (բառին): Ըստ այս մեկնաբա-
նության դուրս եր դալիս, վոր չունենորենքը բնակարան վար-
ձողների թվին չեն պատկանում և հետևաբար ընտրական իրա-
վունքով չեն ոգտվում:

Յեթե այնպիսի մի հրաչք պատահեր, վոր ոկոյարբխտա-
կան աջ Դուման ընդուներ կառավարությանն անցանկալի որենք,
սպա այդպիսի դեպքի համար մի հատուկ հոդված կար, վորի
համաձայն ցարի կառավարութունն իրավունք ուներ ամեն
բոպե ցրել Դուման իրեն հարկավոր ժամկետով այս կամ այն
որենքը առանց Դումայի անց կացնելու համար: Այս հոդվածը
լայն կերպով ողտագործվում եր կառավարության կողմից:
Այս հոդվածի կարգով անց կացվեց ստոլիպինյան հայտնի որեն-
քը հողաշինարարության մասին 1906 թ. նոյեմբերի 9-ին, վորը
դյուղացիներին թույլ եր տալիս ազատ կերպով դուրս դալ հա-
մայնքից և այսպես ասած «ազարակներ» և «հատվածական
տնտեսություններ» կազմել: Ահա թե ինչ եր գրում Վ. Ի. Լե-
նինը ստոլիպինյան ռեֆորմի մասին.

«Ինչպես և ուզում վերափոխել ստոլիպինյան կառավարու-
թյունը դյուղական հին կարգերը: Նա ուզում ե արագացնել
դյուղացիների լիակատար քայքայումը, պահպանել կալվածա-
տիրական հողերը, ոգնել մի բուռն հարուստ դյուղացիների
«ազարակներ կազմել», վորքան կարելի յե շատ համայնական
հող պոկել: Կառավարությունը հասկացել եր, վոր դյուղացիներ
ի ամբողջ մասսան իր դեմ ե և նա աչխատում ե իրեն դաշնա-
կիցներ դտնել դյուղացիական հարուստներից:

Կառավարական «ռեֆորմը» իրագործելու համար հարկավոր է «20 տարվա անդորրություն», ասել է մի անգամ ինքը Ստոլիպինը: «Անդորրություն» նա կոչում է դյուզացիներին հնազանդությունը, բռնության դեմ պայքար չմղելը: Սակայն առանց դեմատվային պետերի և մյուս իշխանությունների բռնության, առանց ամեն քայլափոխում գործադրվող բռնության, առանց բռնադատ տասնյակ միլիոնների վրա, առանց ճնշելու նրանց ինքնուրույնության ամենաչնչին արտահայտությունները, Ստոլիպինյան «ռեֆորմը» չի կարող անց կացվել: Վոչ միայն 20 տարով, այլ իսկի յերեք տարով էլ Ստոլիպինը «անդորրություն» չստեղծեց և չի կարող ստեղծել, — ասա այն անասորք ճշմարտությունը, վոր հիշեցրեց ցարական ծառաներին նախկին մինիստրի գիրքը դյուզական հրեհհներին մասին:

Գյուղացիները չունեն և չեն կարող այլ յեւք ունենալ հուսահատ կարիքի, աղքատության, սովամահության այն դրությունից, վորին նրանց դատապարտում է կառավարությունը, քան պրոլետարիատի հետ ցարական իշխանությունը ստապալելու համար մասսայական պայքար մղելը»:

Յերրորդ Պետական Դուման գոյություն ունեցավ մինչև 1912 թ. հուլիսի 9-ը, այսինքն որենքով սահմանված ամբողջ ժամկետը և այդ ժամանակամիջոցում իրեն ցույց տվեց, վորպես ցարական կառավարության հավատարիմ հենարան: Նա վոչ միայն աշխատավորների դրությունը թեկուզ մի փոքր բարելավող վոչ մի որենք չընդունեց, այլ նույնիսկ վատացրեց այդ դրությունը: Այդ Դուման ամբողջովին աջակցում էր ներքին գործերի մինիստր Ստոլիպինին, վորը դյուզում «ամուր մուտիկ» (այսինքն կուլակ) էր ստեղծում: Դուման իլեցրեց կալվածատերերի հարկը և ավելացրեց բնակչության վրա դրվող կողմնակի հարկերը:

ԶՈՐՐՈՐԴ ԴՈՒՄԱՆ

1912 թ. հունվարին Պրագայում տեղի ունեցավ բուլչիվիկյան կոնֆերենցիա: Մեր կուսակցության պատմության մեջ Պրագայի

կոնֆերենցիան բացառիկ տեղ է զբաղում: Այդ կոնֆերենցիայի ամենակարևոր վորսչումն էր Ռ. Ս. Դ. Բ. Կ. շարքերից լիկ-վիզատորներին վտարելը և մենչեվիկներին հետ վերջնականապես ամեն մի հարաբերութուն խզելը: «Ամեն մի մարքսիստի համար, իհարկե, պարզ է, — զբում էր Լենինը, — վոր թե՛ լիկվիզատորութունը և թե՛ ոտզովիզմը, սրանք մանր-բուրժուական հոսանքներ են, վորոնք իրենց կողմն են զբաղում սոցիալ-դեմոկրատական կուսակցության բուրժուական ուղեկիցներին: Այս հասանփնրի հետ «խաղաղութուն» կամ «հաշտութուն» կնքելը նախապես բացառվում է: Սոցիալ-դեմոկրատական կուսակցութունը պետք է կամ ինքը կործանվի, կամ միանդամայն ազատվի այդ հոսանքներից:

Բոլշևիկները, ձևականորեն մենչեվիկներին հետ միեմույն սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ լինելով, դեռ 1905 թվից սկսած փաստորեն ինքնուրույն կազմակերպութուն են կազմել, իսկ 1912 թվից կուսակցական կազմակերպութունից վտարելով մենչևիկյան լիդերներին՝ ձևակերպվեցին վորպես առանձին «միասնական բոլշևիկյան կուսակցութուն» (Ստալին):

Չորրորդ Պետական Դումայի առաջիկա ընտրութունների հարցի վերաբերյալ Պրազայի կոնֆերենցիան հետևյալ բանաձևերնդունեց.

«Կոնֆերենցիան անպայման անհրաժեշտ է համարում Ռ. Ս. Դ. Բ. Կ. մասնակցութունը IV Դումայի առաջիկա ընտրական կամպանիային, մեր կուսակցության ինքնուրույն թեկնածուների առաջադրումը և IV Դումայում սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիա կազմելը, վորը վորպես մի մաս պետք է յենթարկվի մեր կուսակցությանը վորպես ամբողջի»:

«Առաջիկա ընտրութունների ժամանակ մեր կուսակցության գլխավոր ընտրական լոզունգները պետք է լինեն.

- 1) դեմոկրատական հանրապետությունը.
- 2) Ց-ժամյա բանվորական որը.
- 3) կալվածատիրական ամբողջ հողի բռնագրավումը»:

«Վերը մատնանշված յերեք պահանջների հետ անխզելիորեն

Պատված պետք է պրոպագանդա մղել նաև ս. շ. մինիմում-
ծրագրի մյուս բոլոր պահանջների շուրջը, այն է՝ ընդհանուր
ընտրական իրավունքի, կոալիցիաների ազատութեան, ժողովրդի
կողմից զատավորներ ու չինովնիկներ ընտրելու, բանվորներին
պետութեան կողմից ապահովագրելու, մշտական բանակը ժո-
ղովրդի սպառազինութեամբ փոխարինելու շուրջը և այլն»:

Պրագայի կուսակցական կոնֆերենցիայի այս բանաձևը վո-
րոշում էր մեր կուսակցութեան տակտիկական գիծը չորրորդ
Պետական Դումայի հարցի նկատմամբ:

Չորրորդ Պետական Դումայի ընտրական կամպանիան սկսվեց
1912 թ. ամառը:

Քաղաքական իրադրությունը յերկրում արդեն այլ էր:
Բանվորական շարժման անկումը փոխվել էր նոր վերելքի: Բան-
վորական շարժումն առանձնապես ուժեղացավ 1912 թ. ապրիլին
լենայի հանքերում բանվորներին գնդակահարելուց հետո: Յա-
րական դահիճների այս նոր բարբարոսութեան դեմ ուղղված
գործադուլային ակիբը ծավալվեց ամբողջ յերկրովը մեկ:

Ահա թե ինչ էր դրում Վ. Ի. Լենինը «Ռեֆորմատների
պլատֆորմը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատների պլատ-
ֆորմը» հոդվածում:

«Հեղափոխական վերելքը Ռուսաստանում բացահայտորեն
արտահայտվեց 1912 թ. առաջին կիսում: Քաղաքական գործա-
դուլավորները թիվը, ըստ Փարիսկանտների կատարած հաշիվ-
ների, հինգ ամսում հասավ 515,000 մարդու»:

«Ձինվորների և նավատիների ապստամբություններն ու
ապստամբութեան փորձերը Թուրքեստանում, Բալթիկ ծովի ու
Սև ծովի նավատորմում, որքեկտիվորեն նորից հաստատեցին,
վոր Ռուսաստանում, հակահեղափոխութեան յերկար տարիների
սանձարձակ արշավից և բանվորական շարժման դադարից հետո,
սկսվել է հեղափոխական նոր վերելք»:

Այս վերելքին զուգադիպեց IV Պետական Դումայի ընտրու-
թեան ժամանակը...»:

Բանվորական շարժման շարունակ աճող վերելքը առկա յեր,

ցարական կառավարութիւնը շարունակում էր մուշտընել: Ձեր-
բակալութիւնները, աքսորը և այլ պատիժները թափվում էին
հեղափոխական գործիչների գլխին: Ընտրական որենքը մնում էր
նույնը, ինչ և յերրորդ Պետական Դումայի համար:

Բուրգուարների կուսակցութիւնը շարունակում էր մնալ Դու-
ման, վորպէս ամենակարեւոր «լեզալ հնարավորութիւններից»
մեկը ոգտագործելու ղիրքում:

Վ. Ի. Լենինը 1911 թ. հուլիսին չորրորդ Պետական Դումայի
ընտրութիւնների ժամանակ բոլշևիկյան կուսակցութեան ունե-
ցած խնդիրները մասին գրում էր հետևյալը.

«IՎ Դումայի առաջիկա ընտրութիւնների ժամանակ մեզ
կուսակցութիւնն ամենից առաջ հետապնդում է մասսաների սո-
ցիալիստական լուսավորութեան խնդիրները և հեղափոխական-
դեմոկրատական հեղաշրջումը պրոլետարիատի ու հեղափոխա-
կան բուրժուական դեմոկրատիայի (ամենից առաջ՝ դյուղացիու-
թեան) ուժերով իրագործելու ոգտին մղվող մասսայական ազի-
տացիայի շահերը»:

— «Կուսակցութեան ամբողջ անլիտացիան ընտրութիւնների
ժամանակ պետք է մղվի յերկու Փրոնտով. այսինքն թե՛ կա-
ռավարութեան և նրան բացելիքաց պաշտպանող կուսակցութեան
դեմ, թե՛ հակահեղափոխական լիբերալիզմի՝ կ.—դ. կուսակցու-
թեան դեմ»:

Վորպէս կուսակցութեան թեկնածուներ կարող են հանդէս
գալ միայն այն մարդիկ, վորոնք իրոք ամբողջովին կենսագոր-
ծում են Ռ. Ս.—Դ. Բ. Կ. քաղաքականութիւնը, հալատարիմ են
վրջ միայն այդ կուսակցութեան ծրագրին, այլև նրա տակալ-
կական բանաձևերին և պայքարում են ստոլիպինյան «բանալա-
րական» նոր կուսակցութեան դեմ»:

Չորրորդ Պետական Դումայի ընտրական կամպանիայի ժա-
մանակ մեր կուսակցութեան ԿԿ—ի հրապարակած ընտրական
պլատֆորմի մեջ ասված էր.

«Հինգ տարի յե անցել 1907 թ. հունիսի 3—ի հեղաշրջման
ժամանակից հետո, յերբ Արյունոտ Նիկոլայը, Սոդինկայի ցարը

առաջին և յերկրորդ Դումաների «հաղթողն ու վոչնչացնողը» մի կողմ նետեց իր յերգումները, խոստումներն ու մանիֆեստները, վորպեսզի կալվածատերերի սև հարյուրակի հետ միասին, ոկտյարրիստական վաճառականների հետ միասին սկսի վրեժ առնել բանվոր դասակարգից և Ռուսաստանի հեղափոխական բուրժուարներէից, այսինքն ժողովրդի հսկայական մեծամասնութունից հինգ թվականի համար...

Յեվ վո՞րն է հակահեղափոխութեան այս կատաղութուններէ արդունքը:

Հասարակութեան նույնիսկ «բարձրագուն», չահագործող դասակարգերի մեջ ևս թափանցում է այն գիտակցութունը, վոր այլևս այդպես ապրել չի կարելի: Հենց ոկտյարրիստներն իրենք — այն կուսակցութունը, վոր տիրապետում եր III Դումայում, հեղափոխութունից վախեցած և պետերի առաջ սողացող կալվածատիրոջ ու վաճառականի այդ կուսակցութունն իր սեփական մամուլում այն համոզումն են հայտնում, վոր ցարն ու ազնվականները, վորոնց ոկտյարրիստները հալատով ու ճշմարտութեամբ ծառայել են, Ռուսաստանը փակուղու մեջ են մտցրել...

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցութունը սև յերրորդ Դումայում ևս կարողացավ բարձրացնել հեղափոխութեան դրոշը, կարողացավ այնտեղից ևս ողնել բանվորների կազմակերպմանը և հեղափոխական լուսավորութեան դործին, կալվածատերերի դեմ գլուղացիների մղած պայքարի գործին: Պրոլետարիատի կուսակցութունը առաջավոր դասակարգի միակ կուսակցութունն է, վորն ընդունակ է Ռուսաստանի համար ազատութուն նվաճելու: Յեվ այժմ մեր կուսակցութունը նրա համար չի դնում Դումա, վորպեսզի «պաշտպանի սահմանադրութունը», «համոզի» ոկտյարրիստներին կամ «դուրս մղի ուսակցիան» Դումայից, ինչպես ասում են ժողովրդի խաբող լիբերալները, այլ վորպեսզի Դումայի ամբիոնից մասաներին պայքարելու կոչ անի, պարզաբանի սոցիալիզմի ուսմունքը, բաց անի կառավարական և լիբերալ ամեն մի խաբե-

բայութեան, մերկացնի ժողովրդի հետամոռաց խավերի միապետական նախադաշարումները և բուրժուական կուսակցութեաների դասակարգային արմատները, — մի խոսքով, վորպեսզի նախադատրաստի ուսական նոր հեղափոխութեան ղեկավարաց մարտիկները բանակը...

Բանվորներ ու քաղաքացիներ, միացե՛ք ուրեմն. համախմբուեցե՛ք Ռ. Ս. Դ. Բ. Կ. շուրջը, վորն իր նորերս կայացած կոնֆերենցիայում, կաղդուրվելով ծանր տարիների քայքայումից, նորից և հավաքել իր ուժերը և բարձրացրել իր դրոշը. թող ամենքը և յուրաքանչյուրը մասնակցի ընտրութեանը և ընտրական ազիտացիային և կառավարութեան ջանքերը կջախջախեն, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի կարմիր դրոշը Դումայի ամբիոնից կկանդնեցվի նաև վոստիկանական, իրավադուրիկ, արյունաշաղախ, խեղդված և սոված Ռուսաստանում...

Ռուսաստանի Սոց. - Դեմ. Բանվորական կուսակցութեան

Կենտրոնական կոմիտե»

Ի՞ՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԶՈՐՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԸՆՏՐՈՒՄ

Զորրորդ Պետական Դումայի ընտրական կամպանիան դուրադիպեց իվանովո-Վոդնեսենսկի կուսակցական կազմակերպութեան արագ աճման հետ (դադարի ժամանակաշրջանից հետո) :

Բուլճեիկները Քաղաքային կոմիտեն հունիս ամսին կազմակերպեց նեղ ախտիվի անլեզալ խորհրդակցութեան, վորտեղ վորոշվեց սկսել Պետական Դումայի ընտրական կամպանիայի նախադատրաստութեանը :

Փարբիկաներում և դործարաններում բանվորների ու վարչութեան միջև սկսվեցին ընդհարումներ : Բանվորական շարժումը ղեկավարում էին բուլճեիկները : Բանվորների՝ սրանց, վորպես կռիվներում կոսիված ղեկավար ջոկատի նկատմամբ տածած վստահութեանը խիստ աճեց : Կարելի չե՛ր հուսալ, վոր չորրորդ

Պետական Դումայի ընտրական կամպանիան ամբողջութեամբ բոլ-
շեմիկյան ղեկավարութեամբ կանցնի: Այս հուլիսը հետագա-
յում արդարացան:

Բալինո դյուդի մոտ քաղաքային կոմիտեն կոնֆերենցիա
հրավիրեց, վորին ներկա եյին քաղաքի բոլոր Ֆարրիկաների ու
գործարանների ներկայացուցիչները (բացի յերկու փոքր գոր-
ծարանից):

Այդ կոնֆերենցիայում բանվորներից թեկնածուներ նշվեցին
վորպես Պետական Դումայի ընտրութեան լիազորներ:

Ինչպես և յերրորդ Պետական Դումայի համար, յես նշվեցի
վորպես լիազոր Գրյադնովի Ֆարրիկայից:

1912 թ. սեպտեմբերի 14-ին (հին տոմարով) Իվանովո-Վոդ-
նեսենսկի բոլոր ձեռնարկութեաններում կայացան լիազորներէ
ընտրութեաններ բանվորներից: Համարյա ամեն տեղ անց կա-
ցան բոլշևիկների թեկնածուները:

Ընտրութեանները պայմանները գործարաններում նույնն եր,
ինչ վոր յերրորդ Պետական Դումայի համար: Որինակ Գրյադ-
նովի գործարանում բանվորները հավաքվեցին զբաղարանի շն-
քում, իսկ վոստիկանների ջոկատները կանգնած եյին դռան մոտ
դրսից:

Անցան կուսակցական կազմակերպութեան թեկնածուները:
Ընդամենը ընտրվեցին 24 լիազորներ:

Ամբողջ նահանգից Վլադիմիր եյին հավաքվում լիազորները:
Հավաքվեց ընդամենը 182 մարդ: Մենք տեղավորվել եյինք զա-
նազան հյուրանոցներում: Առավոտյան հավաքվեցինք այսպես
կոչված «ժողովրդական տան» թեյարանում և վորոշեցինք, ինչ-
պես յերրորդ Դումայի ընտրութեանների ժամանակ, նահան-
գապետի մոտ ներկայացուցիչներ ուղարկել խնդրելու, վորպեսզի
թույլ տրվի նախընտրական ժողով կայացնել ընտրողների թեկ-
նածուներ նշելու համար:

Նահանգապետ Սաղանովը մեզ դիմավորեց սառը, թշնամա-
բար: Յերբ յես դիմեցի նրան «պարոն նահանգապետ» բառով նա
ինձ թույլ չտվեց վերջացնել, սկսեց իր կուրծքը ծեծել և իմ վրա

հարձակվելով քղալելի. «Յես — գերազանցութուն եմ. խնդրում եմ հիշել և իմանալ»:

Ինձ առաջ ել պատահել եր լինել այս նահանգապետի մոտ (վորպես Իվանովի չթատիպների պրոֆմիլության նախագահ, յերրորդ Պետական Դումայի ընտրությունների ժամանակ), բայց այսպիսի ընդունելության յես չեյի սպաւում: Ուտի յես խիստ չվարեցի, սակայն հաստատուն ձայնով ասացի.

— Յես զինվորական չեմ և ձեր տխրութենքը չզիտեմ:

Նահանգապետն ավելի ևս սմուր եր դուում և կուրծքը ծեծում.

— Յես գերազանցութուն եմ, յես գերազանցութուն եմ — նա սկսեց վրաքը գետնին խփել:

— Դե յալ, — ասացի յես, — ձերդ գերազանցութուն, մենք յեկել ենք ձեզ մոտ խնդրելու, վորպեսզի թույլ տաք մեզ հալաք վելու:

— Չեմ կարող, չեմ կարող, վոչ մի ժողով չեմ թույլատրում:

— Իսկ ինչպե՞ս անենք, չե՞ վոր մենք պետք ե ընտրողներ ընտրենք: Դրա համար ել հենց այստեղ ենք յեկել, մեզ անհրաժեշտ ե խորհրդակցութուն հրավիրել:

— Այդ ինձ չի վերաբերում, ինչպես ուզում եք ընտրեցեք, իսկ ժողով չեմ թույլատրում:

Նահանգապետն արագ շուռ դալով՝ մտալ իր կարինետը:

Ինչպես և 1907 թ. յերրորդ Պետական Դումայի ընտրությունների ժամանակ, մենք վորոչեցինք նախընտրական ժողով անել անլեզալ կերպով: Բայց յեղանակը մեզ համար նպաստավոր չեր: Վարար անձրև եր դալիս և յերկինքը ամբողջովին ամպերով եր ծածկւած: Ստիպւած էյինք անլեզալ ժողովից հրաժարվել:

Սակայն նույն ուր յերեկոյան մենք հալաքվեցինք ինչ վոր վանքի հյուրատանը և կազմակերպեցինք զալառների ներկայացուցիչների անլեզալ խորհրդակցութուն: Հենց այդ խորհրդակցության ժամանակ ել վերջնականապես նշվեցին ընտրողների

Թեկնածությունները: Նշված բոլոր թեկնածուները բոլշեիկներ էին:

Հետևյալ որը Ազնվականների ժողովարանի դահլիճում քաղաքապետի նախագահությամբ տեղի ունեցան ընտրությունները: Վորպես ընտրողներ նշված թեկնածուներից շատերը, մեզ՝ իվանովցիներին անձանութ էին, ուստի ժողովը բանալուց առաջ մենք վորոշեցինք նրանց «քննել»: Որեխովոյից յեկածներից մեկը՝ Սերգեյեվը քննությունը չբռնեց: Այն հարցին, թե կքվեարկվե՞սարդյոք Պետական Դումայի անդամության համար, յեթե կուսակցական կազմակերպությունը վոչ թե նրան, այլ մի ուրիշ թեկնածու առաջադրի, նա պատասխանեց. «Իսկ ինչո՞ւ չքվեարկվեմ, չե՞ վոր յես դրա համար եմ ընտրող դարձել»:

Պարզ էր, վոր Սերգեյեվը անվստահելի, անդիսցիպլինար մարդ է:

Ժողովը բանալով՝ նախագահը թուաջարկեց անցնել ընտրություններին ըստ դավանների այբուբենական կարգով:

Հերթը հասավ մեր թեկնածուներին: Առաջինը քվեարկվեցին Որեխովոյից յեկածները: Թեկնածու Սերգեյեվի ողտին նրա անհուսալիության պատճառով, վորպես կուսակցականորեն վոչ կայուն մարդու, շատերը չքվեարկեցին և նա տասպալեց: Սերգեյեվի տասպալումից հետո, Որեխովոյից յեկած մյուս յերկու լիազորներն ընտրվեցին, վորպես ընտրող: Այնուհետև սկսեց քվեարկվել Ֆարբիկային ավան Տեյկովոյի թեկնածու Սեմյոնովը, վորն ստացավ 114 ձայն թեր և 43-ը դեմ: Իվանովոյի լիազոր Սամոյլովն ստացավ 118 ձայն թեր:

Ընտրությունները վերջանալուց հետո մենք վերադարձանք Իվանովո-Վոդնեսենսկ: Կուսակցական կազմակերպության առաջ հարց ծագեց, թե ո՞ւմը պետք է նշել Պետական Դումայի անդամ: Բոլշեիկների քաղաքային կոմիտեյը՝ ոկրուգային կազմակերպությունների (Տեյկովո, Շույա, Կոխմա և այլն) ներկայացուցիչների հետ կազմակերպված մի շարք խորհրդակցություններից հետո վորոշվեց վորպես պատգամավոր առաջադրել ինձ:

Յարական իշխանության ներկայացուցիչներն աշխատում էին

անել այն ամենը, ինչ իրենցից կախված է, վորպեսզի բուլչեիկէ չթողնեն Դումա անցնելու: Յեւ յեթե նրանք չէյին կարողանում բուլչեիկներէ ընտրությունը կանխել, ապա նրանք ամեն միջոցներով ձգտում էյին մեկուսացնել իրենց ատելի պատգամավորին: Յարկիմը դրա համար չէր խորչում վոչ մի միջոցից, ամեն տեսակ կեղծ մեղադրանքներ հարուցելով, սեհարյուրակային մամուլի եջերում պատգամավոր-բուլչեիկին ցեխը կոխելով:

Նրանք վորոչեցին ինձ ևս վարկարկել տեղական սեհարյուրակային «*Ивановский листок*» լրագրի միջոցով: Բայց յեքաղաքում լավ հայտնի էյի վորպես ղեռ 1905 թվի բանվորական պատգամավորների խորհրդի անդամ և վորպես չիթ տպողների միութեան նախագահ: Յեւ սեհարյուրակայիններէ իմ դեմ սկըսած կամպանիան վոչ մի հաջողություն չունեցաւ, թեև իրենց «*Листок*»-ն իմ դեմ ուղղված ստերով նրանք ուղարկել էյին բոլոր բանվոր-ընտրողներին:

Պատգամավորներ ընտրող ընտրական ժողովում ներկա էյին մոտ 90 մարդ, ճնշող մեծամասնութեամբ կարվածատերեր և խոչոր կապիտալիստներ: Քիչ չէյին նաև տերտերներ: Այնուհետև դալիս էյին քաղաքի մեջչանները, գյուղացիները՝ 13 մարդ և 6 բանվոր:

Բանվորական կուրիայի ընտրությունները բավական հարթ անցան: Ընտրվեց կուսակցական կազմակերպութեան թեկնածուն:

Գյուղացի ընտրողները ճնշող մեծամասնութեամբ կուլակներ էյին: Ահա նրանց սոցիալական կազմը. շարքային գյուղացիներ՝ 4, վոլոստային ավազներ՝ 5, առևտրականներ՝ 2, գեմստվային վարչութեան անդամներ՝ 2:

Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր Պետական Դումայի անդամ դառնալ, նրանք բոլորն էլ քվեարկվեցին և նահանգական ընտրողների կարվածատիրական և բուրժուական մեծամասնութեանը միանդամայն ազատություն տվին ընտրել իրենցից նրան, ով այդ մեծամասնութեանը դուր էր գալիս:

Զորբորդ Պետական Դումայի անդամ ընտրվեց մի խոչոր, մոտ 70 դեսյատին հող ունեցող, կուլակ, Տարուտին ազգանունով,

«Կոյարբրիտոնները ու սևհարյուրակայինները թեկնածուն :

Ընտրությունների ընդհանուր արդյունքը հետևյալն էր . նահանգից ընտրված 6 պատգամավորներից մեկը կաղեա էր , մեկը ս . Պ . բուլչևիկ և 4 միապետական : 1907 թ . հունիսի 3-ի ընտրական օրենքը գործում էր ճշտորեն , նա կառավարությանը մեծամասնություն էր ապահովում :

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԸՆՏՐՈՒՄ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Մոսկվայի , Խարկովի , Կոստրոմայի և Յեկատերինոսլավի նահանգների բանվորական կուրիայի պատգամավորների ընտրությունները նույնպիսի պայմաններում անցան , «նախընտրական ազիտացիայի» նույնպիսի պրեյմիաներով , կառավարությանն անցանկալի բանվորական թեկնածուներին խուզարկելով և ձերբակալելով :

Սակայն հիշյալ բոլոր նահանգներից չորրորդ Պետական Դոմայի անդամ ընտրվեցին բանվորական կուրիայի գծով բուլչևիկները :

Պետերբուրգի նահանգում բանվորական պատգամավորների ընտրությունները տեղի էլին ունենում շատ դժվար պայմաններում : Վոստրիկանությունը բացարձակապես ամեն ինչ անում էր , վորպեսզի խանդարի իրեն ատելի բուլչևիկների ընտրությունը :

Ընկ . Բադայեվը , չորրորդ Պետական Դոմայի՝ Պետերբուրգի բանվորներից ընտրված պատգամավորը , պատմում է .

«Ընտրությունները տեղի էլին ունենում կիրակի օրը միաժամանակ բոլոր Փարբիկաներում և գործարաններում : Ընտրական ժողովների համար ըստ օրենքի շենքեր պետք է արամադրեր Փարբիկաների ու գործարանների ազմինխտրացիան : Բայց օրենքի նույնիսկ այս պահանջն էլ խախտվում էր : Պետերբուրգի խոչորագույն գործարաններից մեկում , Ոբուխովյան գործարանում , ընտրությունները տեղի չունեցան , վորովհետև նշանակված ժամին գործարանի բոլոր շենքերը փակված էլին : Իժորայի

գործարանում, ընտրությունների համար թեև չենք տրամադրվել եր, բայց մուտքը սահմանափակվել եր ընդամենը 15 բուպետով: Դրանից հետո դռնակը պինդ փակվեց և մի քիչ ուշ յեկած բանվորներն այդպիսով զրկվեցին ընտրական իրավունքից:

Սխմենս-Գալսիե գործարանի, վազոն-ննջարանների Միջադաշին ընկերության և մի շարք այլ, առանձնապես քաղաքի սահմաններից դուրս գտնվող, ձեռնարկությունների ազմինիստրացիան ավելի ևս սարդ եր վարվել: Այդ գործարանների բանվորներին ազմինիստրացիան չեր մտցրել բանվորական կուրիայի ընտրողների ցուցակի մեջ: Յերբ բանվորներն այդ մասին իմացան և դիմում տվեցին՝ բողոքելով ընտրական հանձնաժողովին, այստեղ նրանց հայտարարեցին, վոր արդեն ուշ ե և հանձնաժողովը նրանց իրավունքները վերականգնել չի կարող:

Մի շարք միջոցներ ել ձեռք եյին առնվում, վորպեսզի ընտրական ժողովները «համապատասխան կերպով» անց կենան: Տեղատեղ վոստիկանությունը կատարեց լիաշարության թեկնածուների և ամենաակտիվ, ամենից ավելի հեղափոխականորեն տրամադրված բանվորների ձերբակալություններ: Ըստ որենքի բուն ժողովներում կողմնակի անձեր, այդ թվում նաև գործարանային ազմինիստրացիան և վոստիկանությունը, իրավունք չունեյին ներկա գտնվելու: Դրա փոխարեն գործարանային չենքերի մոտ տեղավորված եյին վոստիկանության ուժեղ ջոկատներ, վորոնք համոզիչ կերպով վկայում եյին վոստիկանական ճնշման մասին: Վորպեսզի ընտրությունները բեկանելու պատրվակ ունենան, մի շարք գործարաններում ազմինիստրացիան չեր տվել աշխատանքի ստաժ ունեցող բանվորների այն ցուցակը, վոր իրավունք ե տալիս մասնակցելու ընտրություններին»¹:

¹ Գաղվածքները բերված են Ա. Յե. Բաղայեվի «Բուլչեիկները Պետական Դումայում» գրքից, Կուսհրատ, 1935 թ.:

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՄԵՆՇԵՎԻԿ-ԼԻԿՎԻԴԱ-ՏՈՐՆԵՐԻ ԴԵՄ

Դրությունը բարդանում էր նաև նրանով, զոր Պետերբուրգում գտնվում էր մենչևիկ-լիկվիդատորների կենտրոնը և հրատարակվում էր նրանց «Лыг» լրագիրը: Մենչևիկները Դումայում որդանանկան աշխատանք կատարելու, այսինքն սևհարյուրակայինների հետ միասին որենքներ մշակելու կոչ էյին անում: Այդ պատճառով ընտրական կամպանիայի ժամանակ բուլչևիկներն ստիպված յեղան բախական ջանք թափել բանվոր դասակարգի դասիական մենչևիկ-լիկվիդատորների դեմ պայքարելու համար:

«Բուլչևիկների և մենչևիկների միջև յեղած վեճերը կատարելինով էյին ընդունել: Այդ վեճերը տեղի էյին ունենում ինչպես կուսակցական կազմակերպությունների վերնախավում, այնպես էլ ստորին խավերում—Փարբիկաներում և դործարաններում և հենց լիազորների միջև:

Ընտրողների ընտրությունից մի շարքի առաջ տեղի ունեցավ լիազորների անլիզալ ժողով անտառում՝ Պորոխովոյից յերկու վերսա հեռու: Ժողովին ներկա էյին մոտ յերեսուն լիազոր և բուլչևիկյան Կի-ի ու մենչևիկյան Կազմակերպական Կոմիտեյի մի քանի ներկայացուցիչներ: Ժողովի վորակյալ կազմը հնարավորություն էր տալիս հարցը դնել ամբողջ սրությամբ: Կռիվը տեղի յեր ունենում բացելիբաց: Բուլչևիկներն ապացուցում էյին, թե անհրաժեշտ է ընտրել վորպես ընտրողներ այն ընկերներին, վորոնք կկենսադործեն կուսակցության ծրագիրը և կենթարկվեն կուսակցական գիրեկտիվներին. լիկվիդատորներն իրենց տեսակետն էյին պնդում, վոր իբր թե անհրաժեշտ է կուսակցական պտակտումից խուսափելու համար ընտրել հայտնի անձանց, անկախ նրանից, թե ինչ պլատֆորմ են նրանք պաշտպանում...

Ժողովը, վորը հինգ ժամից ավել տևեց, չափազանց բուռն վիճարանությունների պայմաններում էր ընթանում: Թեև մեր բանաձևն անցավ բացարձակ մեծամասնությամբ, հավաքելով ներկա յեղող լիազորների ձայների յերկու յերբորդը, բայց լիկ-

վիդատորները հրաժարվեցին այդ բանաձևին յենթարկվել» (Ա. Բաղայեյ) :

Բուն ընտրությունների ժամանակ վոտտիկանությունն սկսեց արդեն առանց քաջվելու չհաստատել բանվորների ընտրած իր համար անցանկալի լիազորների ընտրությունը :

«Ընտրական համադումարը նշանակելու հետ միաժամանակ «պարզարանվեցին» մի շարք Փարբիկաների ու գործարանների լիազորներ: Հոկտեմբերի 4-ին, այսինքն ընտրական ժողովի նախորդակին 21 գործարանի ու Փարբիկայի բանվորների հայտնվեց, վոր լիազորների ընտրություններն անվավեր են ճանաչված: Վերջապես հենց ընտրական ժողովում նահանգապետի արտակարգ ծանուցման համաձայն «պարզարանեցին» Շլիսսելբուրգի դավառի ևս 8 ձեռնարկությունների լիազորների: «Պարզարանվածների» թվի մեջ ընկան խոչորադույն գործարանները, ինչպես Պուտլիովյան գործարանը, վորն ընտրել էր 9 լիազոր, Նեյվայի նավաշինական գործարանը, վորն ուղարկել էր 3 լիազոր և այլն» (Ա. Բաղայեյ) :

Այս ծաղր ու ծանակի հետևանքով բռնկվեց բողոքի գործադուլ: «Առաջինը հանդես յեկավ, գրում է ընկ. Բաղայեյվը, Պուտլիովի գործարանը: Բուն ընտրությունների որը, հոկտեմբերի 5-ին, ճաշից հետո, բանվորները, աշխատանքի չանցնելով, հավաքվեցին ըստ արհեստանոցների և գործադուլ հայտարարեցին: Գործադուլ արեց ամբողջ գործարանը—մոտ 14 հազար մարդ: Ճերեկվա ժամի 3-ին մի քանի հազար մարդ գործարանից դուրս յեկան հեղափոխական յերգեր յերգելով և դիմեցին դեպի Նարվայի դռները, բայց ցրվեցին վոտտիկանության կողմից: Պուտլիովի գործարանին հետևեց Նեյվայի նավաշինական գործարանը, վորի 6,500 բանվորները կողմակերպեցին միտինդ և քաղաքական ցույց: Նրանց միացան Պալի Փարբիկայի, Մաքսվեյի Փարբիկայի, Ալեքսեևի ատաղձագործական Փարբիկայի և այլն բանվորները: Հետևյալ որերը գործադուլին միացան Երիկտոն, Լեսաներ, Գեյսլի, Վուլկան, Դյուֆլոն, Լանդեզիպպե, Ֆենիքս գործարանները, Չեչերի, Բեկի, Լերեդեյի և մյուսների Փարբիկաները:

Գործադուլը տարածվեց Պետերբուրգի բոլոր սոսիսներում : Այս գործադուլին մասնակցում էին վոչ միայն այն գործարանները, վորտեղ լիազորները ընտրությունները չէին հաստատվել, այլև այն գործարանները, վորտեղ լիազորները չէին «պարզաբանվել» : Գործադուլներին ուղեկցում էին միտինդներն ու ցույցերը :

Գործադուլ էին հայտարարել ընդամենը մոտ 100 հազար մարդ : Շատ տեղերում միտինգներ էին տեղի ունենում, վորտեղ հաճախ հանդես եր դալիս ընկեր Ստալինը : Նա հենց նոր եր փախել Նարիմից և Պետերբուրգում անլեզալ կերպով եր ապրում : Ուստի հասկանալի չե, թե ինչ մեծ ուխտ էին հանդիսանում նրա յետևյալները : Բանվորները բոլոր միջոցները ձեռք էին առնում, վորպեսզի պաշտպանեն ընկեր Ստալինին նրան քայլ առ քայլ հետապնդող վոստրիկանությունից :

Բանվորների ճնշման տակ իշխանություններն ստիպված էին լիազորների նոր ընտրություններ նշանակել ավելի քան 20 ձեռնարկներում :

Լիազորների համադուսարում Պետերբուրգի բանվորներից ընտրողներ ընտրվեցին յերեք բոլջևիկ և յերեք մենչևիկ : Ընտրողների նահանգական ժողովում քվեարկվում էին յերկու թեկնածուներ—մի բոլջևիկ և մի մենչևիկ : Ընտրողների նահանգական ժողովի բուրժուա-կալվածատիրական մեծամասնության պարագլուխները ինչպես հարկն ե դլուխ չհանեցին այս յերկու թեկնածուներից և ընտրվեց բոլջևիկ Ա. Յե. Բադայիվը :

1912 թվի ապրիլին սկսեց լույս տեսնել «Правда» լրագիրը, վորը շատ չուսող բաժանորդների լայն շրջան ձեռք բերեց բանվորական բնակչություն ունեցող բոլոր արդյունաբերական կենտրոններում : Չորրորդ Պետական Դումայի ընտրական կամպանիայի ժամանակ «Правда»-ն մեծ կազմակերպական և ազիտացիոն դեր խաղաց :

Լենինի և Ստալինի՝ այս լրագրում տպագրվող ղեկավար հոդվածները ծավալված ընտրական կամպանիայում բոլոր հիմնական ղեկավար ցուցումները տալիս էին : Աւանձնապես մեծ

եր «Правда»-յի դերը ընտրական կամպանիայի ժամանակ Պետերբուրգում: «Правда»-յի խմբադրուժյան շնորհիվ փաստորեն ընկեր Ստալինի կողմից ղեկավարվող ամբողջ կամպանիայի շտաբն էր, վորտեղից նա տալիս էր անհրաժեշտ ցուցումները Պետերբուրգի բոլոր Փարբիկա-դործարանային ձեռնարկուժյուններին ներկայացուցիչներին:

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ռ.Ս.—Դ.Բ.Կ. Կենտրոնական Կոմիտեյի և կուսակցական աշխատողների միացյալ խորհրդակցուժյան (1913 թ. հունվար) բանաձևը, վոր գրել է Վ. Ի. Լենինը, ամփոփելով չորրորդ Պետական դումայի ընտրուժյունների արդյունքը՝ արձանագրում է հետևյալը.

«... չնայած կառավարուժյան անյուր հալածանքներին և նրա կողմից ընտրուժյունները խարդախելուն, չնայած շատ տեղերում միանգամայն վորոշակի ձևավորված և ս.—դ. դեմ ուղղված սևհարյուրակային-լիբերալ բրոկին—Ռ.Ս.—Դ.Բ.Կ. հակաական հաղթանակներ տարավ IV Դումայի ընտրուժյուններին ժամանակ: Համարյա ամենուրեք աճել է ս.—դ. ուղտին տրվող ձայների թիվը 2-րդ քաղաքային կուրիայում, վոր սոցիալ-դեմոկրատիան հետզհետե ավելի յե խլում լիբերալների ձեռքից: Իսկ մեր կուսակցուժյան համար գլխավորը հանդիսացող բանվորական կուրիայում Ռ.Ս.—Դ.Բ.Կ. անբաժան տիրապետուժյուն է պահպանել, ըստ վորում բանվոր դասակարգը կուրիալ բոլոր պատգամավոր-բուլճեիկներին ընտրուժյամբ առանձնապես միահամուռ կերպով ընդգծեց իր անշեղ հավատարմուժյունը հին Ռ.Ս.—Դ.Բ.Կ և նրա հեղափոխական ավանդներին»:

Այսպես ավարտվեց չորրորդ (վերջին) բուրժուա-կապիտալիստիկ Պետական Դումայի ընտրական կամպանիան:

Դումայի ընտրուժյան այս կամպանիան մեծ աշխուժուժյուն

մտքրեց բանլորական լայն մասսաների մեջ, բարձրացրեց նրանց հետաքրքրութիւնը դեպի քաղաքական հարցերը, ուժեղ կերպով նպաստեց պրոլետարիատի շարժման հետադա վերելքին: Չորրորդ Պետական Դումայի բացման որը տեղի ունեցավ Պետերբուրգի բանլորներէ քաղաքական ցույց:

ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ ԶՈՐՐՈՐԻ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Այսպես ուրեմն, Իվանովո-Վոզնեսենսկի բանլորներն ինձ ընտրեցին Պետական Դումայի պատգամավոր: Պատրաստվելով Պետերբուրգ մեկնելու՝ յես զնացի վոստիկանական վարչութիւնը վկայական ստանալու, այն մասին, վոր յես ընտրվել եմ Պետական Դումայի անդամ: Վոստիկանապետի ոգնականին յես հայտարարեցի, թե հնարավոր ե, վոր բանլորները կհավաքվեն ինձ ճանապարհ գնելու ե նախադրուշացրի, վոր յեթե վոստիկանութիւնը չխանգարի դրան, ապա յես կարդ ու կանոնի համար յերաշխափորում եմ: Հակառակ դեպքում տեղի ունենալիք հնարավոր դեպքերի ամբողջ պատասխանատվութիւնն ընկնում ե վոստիկանութիւնի վրա:

— Լավ, — առայ վոստիկանապետի ոգնականը, խիստ կերպով նայելով ինձ, — ընդունում եմ ձեր հայտարարութիւնն ի դիտութիւն...

Մեկնելու որը յերեկոյան կայարանի մոտի հրապարակում հավաքվեց մոտ յերեք հազար բանլոր: Յերկու-յերեք ժամ շարունակ հոետորները հանդես եյին դալիս ճառերով: Այնուհետե կարդացվեց «բանլորների նակագն իր պատգամավորին»: Իմ յեղբայրական խոսքից հետո, զնացքը մեկնելուց անմիջապես առաջ, ժողովը հանդիստ կերպով ցրվեց:

Պետերբուրգ դալուց հետո յես Վ. Ի. Լենինին մի նամակ ուղարկեցի նկարագրելով Վլադիմիրիւյան նահանգի ընտրութիւնները: Ապա մտա «Правда» յի խմբագրութիւնը, վորտեղ պատմեցի, թե ինչպես անցան Դումայի ընտրութիւնները: Հետեյալ որը (նոյեմբերի 11-ին) Տավրիկյան պալատում յես արդեն հանգիպեցի իմ ընկերներին՝ Պետրովսկուհ, Բադայեվին ե մյուսներին: Իսկ նույն որը յերեկոյան տեղի ունեցավ սոցիալ-դեմոկրատական պատգամավորների առաջին խորհրդակցութիւնը, վոր-

տեղ պարզվեց, վոր բանվորական կուրիայի բոլոր վեց պատգամավորներն եւ բուլչեիկներն են: (Հետագայում պարզվեց, վոր վեցերորդ պատգամավորը—Մալինովսկին հանդիսանում եր պրովոկատոր, վորին ուղարկել եր բուլչեիկներէ մոտ պահնորդական բաժինը):

Բացի մեզնից, բուլչեիկներից, քաղաքային կուրիայի գծով անց ելին կացել նաև յոթ տղիալ-դեմոկրատ մենչեիկներ:

Ս.-դ. Փրակցիայի հենց առաջին նիստերից մեկում կարգացվեցին բանվորներէ նակազներն իրենց պատգամավորներին: Իրենց բովանդակութեամբ վեց բուլչեիկներին տված նակազներն ընդհանուր առմամբ նույնն ելին: Այդ նակազներից արխիփներում պահպանվել է միայն Պետերբուրգի բանվորների նակազն իրենց պատգամավոր Ա. Ի. Բաղայեվին, վոր գրել է ընկեր Ստալինը, վորը ղեկավարում եր չորրորդ Պետական Դումայի ընտրությունները Պետերբուրգում¹:

Հենց առաջին որերից մեր, բանվոր բուլչեիկներէս, է մենչեիկ-լիկվիդատորների միջև սկսված անընդհատ պայքարն ավելի ու ավելի խորանում եր: Բոլոր սկզբունքային հարցերի գծով անվերջ վեճեր ելին տեղի ունենում: Մեր կուսակցութեան կենտրոնական կոմիտեն դրությունը համարեց անհանդուրժելի է 1913 թ. վերջում, համաձայն ԿԿ-ի վորոշման, բանվորական պատգամավորներէ մեր խումբը դուրս յեկավ Դումայի ս.-դ. Փրակցիայի կադմից: Մենք կադմեցինք Ռուսաստանի ս.-դ. բանվորական Փրակցիա, վորը ԿԿ-ի (Լենինի, Ստալինի է Սվերդլովի) ղեկավարութեամբ աշխատանքը նոր ձևով տարավ, գլխավոր ուշադրությունն ուղղելով դեպի մասսաների կազմակերպումը Դումայից դուրս:

Անհարշուրակային Դուման ամեն ինչ անում եր, վորպեսզի սթավարացնի պատգամավոր-բուլչեիկի աշխատանքը: Բուլչեիկյան պատգամավորներին զրկում ելին խոսքից, տասնյակ նիստերից

¹ Այդ նակազը հրատարակվել է Ա. Յե. Բաղայեվի «Բուլչեիկները Պետական Դումայում» գրքում, Կուսհրատ, 1935 թ.:

վտարում ելին, ուժով դահլիճից դուրս ելին բերում և այլն:

«Կառավարութեան նկատմամբ կիրառած իրենց հաճոյակատարութեամբ,—պատմում և ընկ. Բաղայեւլը,—սև հարյուրակայիններն այնքան հեռուն ելին գնում, վոր դուրս դալուց հրաժարվողները նկատմամբ կիրառում ելին ռազմական ուժ: Հեռացման արարողութիւնը հետեյայն եր: Ռոճյանկոն ընդմիջում եր հայտարարում, վորի ժամանակ դահլիճ եր մտցվում զինվորական ջոկատ: Զինվորները շարվում ելին բարձրի յերկարութեամբ, իսկ պահակի պետը մոտենում եր վտարվածին և առաջարկում եր հեռանալ: Միայն դրանից հետո՝ հայտարարելով, թե «յենթարկվում եմ բռնութեանը», վտարված պատգամավորները թողնում ելին դահլիճը»:

Բայց բանվորական պատգամավորների համար վոչ մի ծաղր ու ծանակ սարսափելի չեր, նրանք զիտեյին, վոր Ռուսաստանի բանվոր դասակարգը նրանց աջակցում ե:

Վորքան ավելի ելին կալվածատերերի և կապիտալիստների ներկայացուցիչներն ատում պատգամավոր-բոլշևիկներին, այնքան ավելի մեծ սիրով ելին շրջապատում նրանց պրոլետարիատն ու աշխատավոր գյուղացիութիւնը:

Պրոլետարիատի միակ հեղափոխական կուսակցութիւնը Ռուսաստանում բոլշևիկները կուսակցութիւնն եր:

Բոլշևիկ պատգամավորներն աշխատում ելին մինչև 1914 թ. իմպերիալիստական պատերազմի սկիզբը: Պատերազմն սկսվելուն պես բոլշևիկյան Ֆրակցիան Լենինի և Ստալինի ղեկավարութեամբ, կուսակցութեան բոլշևիկյան ԿԿ-ի ղեկավարութեամբ ակտիվորեն հանդես յեկավ ընդդեմ իմպերիալիստական պատերազմի և 1914 թ. նոյեմբերի սկզբին պատգամավոր բոլշևիկները ձերբակալեցին: Յարական դատարանի դատավճռով մի տարվա բանտարկութիւնից հետո նրանք դատապարտվեցին մշտական աքսորարնակութեան Սիբիրում:

Դումայի բոլշևիկյան Ֆրակցիայի հետ միասին դատի տրված դավաճան և ժողովրդի թշնամի Կամենեւլը ղեռ այն ժամանակ դատարանում իսյոյառակ յերկերեսանի և դավաճանական դիրք

բռնեց, ասպացուցելով, թե նա ամբողջովին համամխտ է մենչեիկ սոցիալ-պատրիոտ Յորդանսկու հետ, վոր նա համաձայն չէ բուլչեիկյան կի-ի հետ և, հետևաբար, նա պատասխանատու չէ բուլչեիկներէ քաղաքականութեան համար: Կամենսկի այս դավաճանական, անարդ. դերը հենց այն ժամանակ մերկացրեց լինինը:

Ահա թե ինչ պայմաններում էր տեղի ունենում բուլչեիկ-պատգամավորների աշխատանքը բուրժուա-կալվաճատիրական Պետական Դումայում:

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բուլչեիկների կուսակցութեան ընկեր Ստալինի ղեկավարութեամբ մեր յերկրի բանվոր դասակարգին և դյուղացիութեանը հասցրեց սոցիալիզմի հաղթանակին. «Մեր խորհրդային հասարակութեանը հասել է այն բանին, վոր նա հիմնականում արդեն իրադործել է սոցիալիզմը, ստեղծել է սոցիալիստական իրավահարգ...» (Ստալին): ԽՍՀՄ-ի Ստալինյան Նոր Սահմանադրութեանը հանդիսանում է հաղթանակած սոցիալիզմի սահմանադրութեանը և սոցիալիստական հասարակութեան հիմնական որենքն է: Պարզ է, վոր սրա հետևանքը «... կլինի մասսաների քաղաքական ակտիվութեան հետագա ուժեղացումը, աշխատավորների նոր խալերի ներգրավումը պետութեանը կառավարելու գործի մեջ: Դրանով իսկ պրոլետարիատի ղեկատարության դասնում է ամէյի ևս ճկուն և, հատևաբար, հասարակութեանը բանվոր դասակարգի կողմից պետականորեն ղեկավարելու ամէլի հզոր սխտեմ, պրոլետարական ղեկատարության բազան լայնանում է, նրա հիմքը դառնում է ամէլի ամուր...» (Ժդանով):

Ստալինյան Սահմանադրութեանը տալիս է խորհրդային, սոցիալիստական ղեմոկրատիզմի չդերազանցված մի որինակ, վորը հնարավոր է միայն մեզ մոտ, հաղթանակած սոցիալիզմի յերկրում: Պատմութեան մեջ առաջին անգամը պայմաններ են ստեղծվել իրոք ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի և դադանի քվեաբեկութեան համար:

Ստալինյան Սահմանադրությունը դեմոկրատական ազատությունները վոչ թե պարզապես ազդարարում է, այլ այդ ազատություններն որենսդրական կարգով ապահովում է նյութական միջոցներով:

Խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի ծաղկումը ԽՍՀՄ-ում տեղի յե ունենում հենց այն ժամանակ, յերբ Ֆաշիստական բուրժուազիան կատաղի պայքար է մղում բուրժուական դեմոկրատիայի բոլոր և ամեն տեսակ մնացորդների դեմ:

Սոցիալիզմի՝ Ստալինյան Սահմանադրության մեջ ձևակերպված և ամրապնդված հաղթանակները ձեռք են բերվել պրոլետարական դիկտատուրայի բոլոր թշնամիների դեմ մղված անողոր պայքարով: Ճապոն-դերմանական Ֆաշիզմի լրտեսների ու դիվերսանտների հակահեղափոխական տրոցկիստական-բուխարինյան բանդան փորձում եր ԽՍՀՄ-ի յեղբայրական աշխատավոր ժողովուրդների վոսկորների ու արյան վրա ստեղծել ճապոն-դերմանական Ֆաշիստների դիկտատուրան:

Ժողովրդի թշնամիներին արմատախիլ անելը նոր ընտրությունները հաջող անցկացնելու և մեր կողմից հաղթականորեն դեպի կոմունիզմը շարժվելու ամենակարևոր պայմանն է: Մեր յերկրի ամեն մի դիտակից քաղաքացի չպետք է վոչ մի բոպե մոռանա, վոր ԽՍՀՄ-ն դա՛նվում է կապիտալիստական յերկիրների շրջապատման մեջ, վոր հակահեղափոխական իմպերիալիստական բուրժուազիան ուղարկելու յե մեզ մոտ յերկու, յերեք անգամ ավելի շատ լրտեսներ ու դիվերսանտներ, քան ուրիշ յերկիրները, վոր տրոցկիստական-բուխարինյան բանդային պատկանող զգվելի դավաճանների ու բանդիտների դեռ վոչ բոլոր արմատներն են վոչնչացված:

ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի IV նստաշրջանում 1937 թ. հուլիսի 9-ին ընդունված «ԽՍՀՄ-ի Գերադույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը», վոր մշակվել և կառուցվել է Ստալինյան Սահմանադրության հիման վրա և նրան համապատասխան, հանդիսանում է մարդկության պատմության ամենադեմոկրատական ընտրական որենքը:

Խորհուրդների Համամիութենական VIII արտակարգ Համա-
դումարին տված իր ղեկուցման մեջ ընկեր Ստալինը Նոր Սահմա-
նադրութեան նշանակութեան մասին ասաց հետևյալը .

«Այժմ, յերբ Փաշլիգմի սղտոր ալիքը լուտանք ե թափում
բանվոր դասակարգի սոցիալիստական շարժման վրա և ցեխի հետ
ե խառնում քաղաքակիրթ աշխարհի լավագույն մարդկանց դեմո-
կրատական ձգտումները, ԽՍՀՄ-ի Նոր Սահմանադրութեանը մե-
ղադրական ակտ կլինի Փաշլիգմի դեմ, մի ակտ, վորն ասում ե,
թե սոցիալիզմը և դեմոկրատիան անպարտելի յեն» :

Սոցիալիզմն ու դեմոկրատիան անպարտելի յեն : Վոչ վո՛քի չի
հաջողվի սոցիալիզմն ու դեմոկրատիան ջախջախել : Ժողովրդի
թշնամիները, սրոցկիստական, բուխարինյան ու այլ գույնի լըր-
տեաները փորձում եյին իրենց Փաշխտական տերերի առաջա-
դրութեամբ քայքայել սոցիալիզմի յերկրի հզորութեանը : Այդ
նրանց չհաջողվեց և յերբե՛ք չի հաջողվի :

Խորհրդային Ժողովուրդը կոմունիստական կուսակցութեան
գլխավորութեամբ վոչ վո՛քի թույլ չի տա վորևե վտանձուցութեան
ընդդեմ սոցիալիզմի մեծ նվաճումների և իր՝ Ստալինյան Սահ-
մանադրութեան :

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղափոխութեան սկիզբը	3
Յարի վողորմութեանը	5
Յարական պռչառ սահմանադրութեանը	6
Կալվածատեղերի ու բուրժուաների ընտրական նոր որենքը	8
Յարիզմը ննշում է հեղափոխութեանը	10
Ի՞նչպես և ո՞ւմն էյին ընտրում II Դումայի անդամ	12
Յարական կառավարութեանը ժողովրդից չէր քաշվում	15
Ո՞ւմն էյին ընտրում կապիտալիստներն ու կալվածա- տերերը պետական Դումաների պատգամավոր	18
Բոլշևիկները մասսաների համար մղած պայքարում	20
Բանվորների պատգամավորները	23
Յերբորդ Դումայի պատգամավորները	28
«Յերկրորդ պատար»	30
Զորբորդ Դուման	32
Ի՞նչպես էյին բանվորները չորբորդ պետական Դումայի պատգամավորներ ընտրում	37
Ի՞նչպես էյին ընտրում Պետերբուրգում	42
Բոլշևիկների պայքարը մենշևիկ-լիկվիդատորների դեմ	44
Վ. Ի. Լենինը ընտրական կամպանիայի մասին	47
Բոլշևիկները չորբորդ Դումայում	48
Ստալինյան Սահմանադրութեանը	51

Թարգմ.՝ Մ. Հովհաննիսյան
Պատ. խմբ.՝ Գ. Սեդրակյան
Տեխ. խմբ.՝ Ի. Վարդանյան
Սրբադրիչ՝ Ս. Շահրազյան



Գլուխաբեր լրագրող — 9812

Պատվեր 1270

Հրատ. 4356

Տիրաժ 20.000. Թուղթ 62×94. Տպ. մամ. 3½, մեկ
մամ. 38400 նիշ, հեղ. 3¼ մամ. գինը 45 կոպ.

Հանձնված է արտադրության 25/XI 1937 թ. Տպված
է տպագրության 28/XI 1937 թ.

-054.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0016323

-054,

ԳԻՆԸ 454.

536

ЦЕНА

11
9938

Прол. 1940г.

Ф. Н. САМОЙЛОВ
Как происходили
выборы при царизме
Гиз Арм. ССР, Ереван. 1937 г.